I-95

ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ Ա. ՏԱՐԻ ԻԴ. ՅՈՒՆՈՒԱՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ. ԵՐԿՐԻ ապը. (Թարգմ.) Խ. Ք. Խ. . . 1

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. ՍՏՐԿՈՒԹԵԱՆ բարոյական ապդեցութիւնը հին հասարակութեան վերայ. (Շարունակելի, Թարգմ. Ս.) 19

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ նկատողութիւնք (Շարունակելի) ՔԱՋԲԵՐՈՒՆԻ. . . . 37

ԱԶԳԱՅԻՆ. ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ . . . 53

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. Քաղուածք կոնդակայ Վեհափառ Հայրապետի ապդիս. . . 56

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

Ռ.ՅԽ —1891

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ ԱԿԱՆ

ՆՈՐ—ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԸ

Թիֆլիսում

ԱՌԱՋԻԿԱՅ 1891 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Ութերորդ տարի)

Կը հրատարակուի նոյն դէպքով և ծրագրով ամէն օր՝ բացի կիրակի և պօնէրլին հէրուող օրէրից

Խմբագրութիւնը կ՝ստանայ և սեպհական հեռագիրներ

Տարեկան գինն է 10 *ռուբլի, վեց ամսուանը* 6 *ռուբլի, հատով* 5 *կոպ.։*

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 40 *ֆրանք։*

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-*ից միայն։*

Թիֆլիսում բաժանորդ են գրւում դիմելով «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում պօստ-հեռագրատան դէմ տուն № 12։

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» *կամ՝* Tiflis (Caucase) Rédaction du Journal «Nor—Dar»

Խմբագիր - Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ.



ԱՐԱՐԱՏ

ԹԻՒ Ա. — ՇՐՋԱՆ ԻԳ. 1891 ՏԱՐԻ ԻԴ. ՅՈՒՆՎԱՐ 1.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԵՐԿՐԻ ԱՂԸ.

«Դուք էք աղ երկրի.» (Մատ. Ե. 13.)

Աւետարանը լի է հրաշալի խօսքերով, որոնք մեզ չեն զարմացնում, որովհետև նրանց ընտելացած ենք. այդպէս են և վերոյիշեալ խօսքերը: Երևակայեցէք ձեզ, թէ ինչ կմտածէր այս աշխարհի իմաստունը. եթէ տեսնէր այն աշակերտներին, որոնց Յիսուս երկրի աղ էր

անուանում։ Ակներև, տգէտ Գալիլիացիներ, որոնք ոչինչ հասկացողութիւն չունէին բարձր առարկաների մասին, այդ ձկնորսներն ու մաքսաւորները, որոնք խօսում էին հապիւ յայտնի լեզուով, մարդիկ՝ որոնց եռանդը ամենաթոյլ արգելքն անգամ բաւական էր պաղեցնել և վերջապէս մարդիկ՝ որոնք այնչափ փոքրոգի գտնուեցան իրանց Ուսուցչի խաչի առաջ, երկրի աղը պէտք է դառնային։ Ի վերայ այսը ամենայնի այս խօսքերը ճշմարտութիւն էին և մենք կամայ ակամայ պէտք է համաձայնենք դրա հետ։ Մի հայեացք գցենք երկրագնդի քարտեզի վերայ. որտեղ է նկատվում բարոյական կեանք, յառաջադիմութիւն, յոյս, քաղաքակրթութիւն, ազատութիւն, վերջապէս ապագայ։ Այնտեղ՝ որտեղ տարածուեցաւ այդ Գալիլիացիների խօսքն և թափանցեց ժողովուրդների մտքի և սրտի մէջ։ Ներկայ աշխարհը իւր բոլոր լաւ կողմերով պարտական է այդ մի բուռն մարդկանց. նրանք մեր ուսուցիչներն են և մենք ապրում ենք նրանց ժառանգութեամբ։ Երբ հին աշխարհը անբարոյականութեան մէջ նեխում էր աւելի և աւելի, և իւր քաղաքակրթութեան գագաթնակետում ոչ այլ ինչ էր ներկայացնում եթէ ոչ գարշահոտութիւն տարածող մի դիակ, քրիստոնէական հասարակութիւնների մէջ նշմարւում է գաղտնի կենսական, թարմ ոյժ, որը յաղթահարելով ամեն արգելքների, 18 դարից յետոյ տարածում է ամեն տեղ իւր յաղթական ներգործութիւնը։ Գալիլիացիների քարոզած փրկարար հաւատը այնպէս մերուեցաւ մեր կեանքի հետ որ այլ ևս անհնարին է նրան բաժանել։ Նա՝ մեր օրէնքների մէջն է և կերպարանափոխում, կատարելագործում է նրանց. նա մեր բարք ու վարքի մէջն է և փրկում է նրանց ապականութիւնից, բարքի, որ ժամանակակից հեթանոսութիւնը կցանկար վարակել. նա՝ մեր ընտանեկան կեանքի, ընքուշ ու սուրբ յարգանաց մէջն է, որով շրջապատուած են քրիստոնէի ամուսինն և նրա զաւակը. — նա՝ մեր մաքուր ուրախութիւնների մէջն է, որոնք եսականութեամբ չեն վարակուած. նա՝ այն համակրանաց մէջն է, որ մշտապէս մեծանում է յօգուտ աղքատների և տառապեալների. նա՝ այն միութեան մէջն է, որ աւետարանը սփռում է մեր վշտակրութեանց վերայ. նա՝ կե-

նայ խօսքի և անմահ յուսոյ մէջն է, որոնք գրում ենք մեր հանդուցեալների շիրիմների վերայ. նա՝ մեր խղճի մէջն է, որ վրդովում է անարդարութիւններով և գարշ աղտեղութիւններով, որոնք առանց քրիստոնէութեան մեզ համար գգալի չէին կարող լինել. նա՝ վերջապէս, արդար, ազնիւ անբաւականութեան մէջն է, որ արտայայտում է անհաւատը, նկատելով քրիստոնեաների մէջ գազիր և պիղծ գործեր. նա՝ ամենուրեք է. և Փրկիչը, դառնալով իւր աշակերտներին, ճշմարտութիւն ասաց. «Դուք էք աղ երկրի»:

Փրկչի այս խօսքերը պարունակում են իրանց մէջ այն հասարակ բայց գեղեցիկ ներգործութեան պատկերը, որ պէտք է ցոյց տան քրիստոնեաները ամբողջ աշխարհի վերայ. ո՞րն է այդ ներգործութիւնը և ի՞նչ ձևով պէտք է նրան երևան հանեն:

Երկու եղանակ կայ մարդկանց վերայ ներգործելու. արտաքին — նիւթական կամ՝ բարոյական բռնադատութեամբ, և ներքին — համոզելով: Սրանցից ո՞րը ընտրեց Քրիստոս: Նա մի խօսք չէ ասել որից կարելի լինի եզրակացնել, որ նա ցանկացել է ոյժի վերայ յենուիլ: Իւր աստուածային հայեացքով նա տեսնում էր ապագան, նախագուշակում էր այն հակակրութիւնը, արհամարհանքը, հալածանքը, ատելութիւնը որ աւետարանը պէտք է յարուցաներ: Բայց նա միև նոյն ժամանակ ասում էր, որ երկրի մէջ սերմանած ճշմարտութիւնը, ինչպէս մանանեխի հատիկ, պէտք է մեծ ծառ դառնայ, որի ստուերի տակ մի ժամանակ ապաստանարան գտնեն ազգերը: Ճշմարտութեան ոգին ներշնչելով 12 մարդկանց մէջ, ուղարկեց նրանց աշխարհը նուաճելու, ասելով. «Դուք էք աղ երկրի»: Այսպէս հիմնուեցաւ եկեղեցին. երեք դար անցնելուց յետոյ խաչը բարձրացաւ այն ժամանակ յայտնի աշխարհի բոլոր ծայրերում:

Բայց արևմտեան եկեղեցին յոգնեցաւ այս դանդաղ գործողութեամբ: Մոռանալով իւր մեծ Վարժապետի պատուէրը — համոզել աշխարհը ճշմարտութեան միջոցաւ, ցանկացաւ հպատակեցնել, ոյժ գործադրելով՝ պահանջեց արտաքին տիրապետութիւն. մի եղանակ՝ որպիսին Քրիստոս հենց իւր փորձութեան օրում մերժեց: Եւ այսպէս նա աշխարհային տիրապետութեան հասաւ, գործադրելով խորամանկութիւն և ամենատեսակ հալածանքներ յարուցանե-

ով։ Կան մարդիկ որոնք ասում են, որ եկեղեցին երբէք ճնշումն չէ գործել և որ այդ պատասխանատուութիւնը ընկնում է մարմնաւոր իշխանութեան վերայ։ Բայց դատել այսպէս նշանակում է բաւականանալ օտարոտի երկդիմի մտքերով։ Դահճին մատնող եկեղեցական իշխանութեան և դահճի մէջ նոյն տարածութիւնն է, ինչ որ մտածող գլխի և հարուածող ձեռքերի մէջ։ ԵՒ առաւել ատելի է գլուխը որ ցանկանում և պահանջում է սպանութիւն՝ քան ձեռքը որ կատարում է նրան։

Արևմտեան եկեղեցին ցանկանում էր բռնութեամբ տիրապետել։ Նա ցանկանում էր տիեզերական աստուածպետութիւն ստեղծել։ Հասկանալի է թէ նրա ցնորքների մէջ ինչ մեծութիւն կար։ Ես գիտեմ որ նա այդ կերպով կամենում էր հոգիները փրկել։ Ես գիտեմ, որ նա այս աշխարհին ասում էր։ «Հնազանդուիր ինձ, ես քո մայրն եմ»։ Բայց աշխարհը սոսկաց, երբ այդ մօր ձեռքերը իւր մոլորեալ որդւոց արեան մէջ թաթախած տեսաւ։ Աշխարհը չի մոռանալ ահռելի Ինկվիզիցիան, որ ստեղծեց Կաթոլիկական եկեղեցին։ Դրանով նա յոյս ունէր ապահովացնել իւր տիրապետութիւնը ժողովուրդների վերայ։ Ի հարկէ նոյն իսկ յաջողութիւնը նրան չէր կարող արդարացնել։ Բայց յաջողութիւն ունեցաւ։ Սրան կարող էին հաւատալ մինչև այն ժամանակ, երբ նա ճնշում էր հերետիկոսութիւնը և ստիպում էր ազգերին խոնարհելով իւր առաջ՝ լռութեամբ լսել կաթոլիկական միութեան ձայնը։ Բայց չէ՞ք նկատել արդեօք որ հենց այդ ժամանակից յանկարծ կանգ առան միսիոներական քարոզութիւնների տարածումը, որ այնչափ յատուկ և նշանաւոր էր քրիստոնէութեան նախնական ժամանակներում։ Միջին դարի վերջերին մօտ՝ քրիստոնէական եկեղեցին տեսաւ, ինչպէս աստիճանաբար հանգչում են կեանքի և լուսոյ կենդրոնները, որպիսիք էին, Կարթագէնը, Աղէքսանդրիան, Երուսաղէմը, Անտիոքը, Եփեսոսը, Կոստանդնուպոլիսը և Աթենքը։ Չէ՞ք նկատել արդեօք որ մինչև կրօնական մեծ յեղափոխութիւնը, նա արդէն զրկուած էր այն երկրների երրորդ մասից, որոնց վերայ տարածվում էր նրա իշխանութիւնը։ Նկատելի է մինչև անգամ որ այն ցեղերի մէջ, որոնք ամենից երկար ժամանակ են ենթարկուել

արհեստական միութեան լծին, ներկայ ժամանակիս անհաւատութիւնը աւելի աւերմունքներ է անում և քրիստոնէութեան դէմ աւելի կատաղի թշնամութիւն յարուցանում: Ահա թէ ինչ ստացաւ Արևմտեան եկեղեցին, որ ցանկանում էր տիրապետել մարդկանց բռնի կերպով, փոխանակ որ նրանց հոգու մէջ թափանցէր:

Թոյլ տուէք ինձ այս տեսարանի հակապատկերը դնել այստեղ: 250 տարի մեզանից առաջ մի բուռն փախստականներ իջան Նոր Անգլիայի ժայռոտ ափերում: Նրանք գնացին այնտեղ աշխարհի վերայ մի անկիւն գտնելու, որտեղ կարող լինէին խաղաղ կերպով Աստուծոյն աղօթել: Այնտեղ՝ անապատում, ամենատեսակ զրկանքներով խղճի մի ապաստան բարձրացրին որ ազատ էր մարդկանց լծից: Նրանք աստիճանաբար աճեցին: Այդ նոր հասարակութեան մէջ ստիպողական, բռնի ոչինչ չկար, բացի քրիստոնէական հաւատից, որ գործում էր իրան յատուկ առաքինութիւններով: Ոչինչ չկար, բացի երկրի աղը որ թափանցում էր մարդկանց խղճի մէջ: Այն ժողովուրդը որ կազմակերպեցին այդ փախստականները, ներկայ ժամանակում մի հրաշալի տեսարան է ներկայացնում, որի առաջ յափշտակութեամբ և զարմացմամբ կանգ են առնում եւ կաթոլիկները եւ բողոքականները: Մենք տեսնում ենք ահագին ժողովուրդ որ յօժարակամ խոնարհում է Աստուծոյ աջի տակ. մենք տեսնում ենք քրիստոնէական հաւատ՝ որ անկեղծօրէն և յայտնապէս դաւանում են նշանաւոր զօրապետներ, դատաւորներ, զօրականներ, որոնք իրանց հրատարակութիւնների մէջ առ ծերակոյտն և զօրքը քարոզում են կենդանի Աստուծոյ և մարդկային կեանքի մէջ Նրա ներկայութեան մասին. խօսում են իրանց զղջման և հեգահոգութեան մասին, միանում են ընդհանուր աղօթքի մէջ և կարողանում են հսկայական պատերազմ վերջացնել առանց դէպի վրէժինդրութիւն հրաւիրելու, առանց ազատութեան դիպչելու:

Եւ այսպէս հաւատը միացած քրիստոնէական կեանքի հետ, ներգործելով մէկի միջնորդութեամբ միւսի վերայ և թափանցելով աշխարհի մէջ, հիմնում է այստեղ Աստուածային թագաւորութիւնը: Սա միակ դրական միջոցն է որ մեր ձեռքում ունենք: Գիտեմ, որ

շատ հաւատացեալներ հառաչանքներով են ուղղում իրանց հայեացքը անցեալի վերայ, և երազում են եկեղեցու նախկին արտօնութիւնների և իրաւունքների վերադարձը, որոնցով կրկին կարելի է նրա տիրապետութիւնը հոգիների վերայ ապահովել: Ապարդիւն ցաւակցութիւն. անցան այդ ժամանակները անդառնալի կերպով. ներկայ հասարակութիւնը այլ ևս չէ կամենում եկեղեցւոյ արտաքին լուծը: Ինձ համար մինչև անգամ զարմանալի է, որ հաւատը յուզուել կարող է այս տեսակ փաստերով: Ձեր հաւատը – տատանւում է նրա համար միայն, որ եկեղեցին նոյն պայմանների մէջ է դրուած, որոնց մէջ նրան հիմնեց Քրիստոսը. և փոխանակ աշխարհի վերայ որպէս քաղաքական հաստատութիւն ներգործելու, պէտք է ազդէ իւր հիմունքներով որպէս երկրի աղը: Ձեր հաւատը տատանվում է այն պատճառաւ միայն, որ դուք չէք կարող այն տեսակ տիրապետութեան հասնել, որը յենուած լինէր միմիայն շինծու և կեղծաւոր յարգանաց վերայ: Ուղղեցէք ձեր հայեացքը բարձր և փոխանակ հառաչանքներով այս աշխարհից զօրութիւն և արտաքին իշխանութիւն մուրալու, որ ձեզ բացասուում է, որոնեցէք եկեղեցւոյ Գլխի մէջ այն անեւևոյթ և հոգևոր զօրութեան գաղտնիքը, որը միայնակ կարող է յաղթել այս աշխարհին:

Եւ այսպէս քրիստոնեաների ներգործութիւնը այս աշխարհի վերայ հոգևոր պէտք է լինի և այդ՝ իւրաքանչիւր հաւատացեալ առանձին առանձին պէտք է ցոյց տայ: Խնդրում եմ յատկապէս ուշադրութիւն դարձնել այս վերջին մտքի վերայ: Չէ կարելի չզարմանալ որ մեր երկրում (Ֆրանսիա) ամենքը ձգտում են թոթափել իրանցից կրօնական պատասխանատուութիւնը մի որև է հաստատութեան կամ մի որև է հիմնարկութեան վերայ: Բայց ոչ մի հիմնարկութիւն, ոչ մի հաստատութիւն անկարող է կատարել այն առաքելութիւնը, որի համար հաճելի էր Աստուծոյն հրաւիրել ձեզ. այդ զարհուրելի է մեր թուլութեան համար, բայց իսկապէս այդ այդպէս է: Նրան հաճելի էր որ Իւր Որդու մէջ մարմնացած ճշմարտութիւնը, մարմնանար և մի յատուկ չափով իւրաքանչիւր քրիստոնէի մէջ. կեանք ստանար և սրտից սիրտ անցնելով բոլոր աշխարհը նուաճէր: Քրիստոնէութիւնը կլինի այն՝ ինչ որ դուք ինք-

ներդ կլինէք։ Ի զուր խոյս կտայիք այդ հանդիսաւոր պատասխանատուութիւնից. ի զուր նրան ուրիշների վերայ կբարձէիք. ոչ ոք իրաւունք չունի այն ձեզանից վերցնել և դուք իրաւունք չունէք նրանից հրաժարուել։ Ի զուր կցանկային աշխարհականները դնել այդ պատասխանատուութիւնը միմիայն եկեղեցւոյ պաշտօնեաների վերայ. իւրաքանչիւր մարդ իւր ծանրութիւնը պէտք է կրէ ըստ առաքելոցն։ Ինչ և անէք դուք, պէտք է լինէք երկրի աղը. և այս աշխարհում ճշմարտութեան ապագան կախուած է ձեզանից — իւրաքանչիւրից։

Բայց ի՞նչպէս պէտք է ներգործել աշխարհի վերայ։ Ուրիշների վերայ հոգեպէս և բարոյապէս ազդելու համար երկու միջոց ունինք, կենդանի ու գրաւոր խօսք և մեր իսկական կեանքը։ Ո՞րքան ոյժ ունի մարդկային խօսքը. Ս. Յովհաննէսը Աստուծոյ Որդւոյն Բան է անուանում։ Որպէս զի մեր խօսքը իւր մէջ առաքինութիւն պարունակէր, հարկաւոր է որ նա Աւետարանի ոգւով ներշնչուած լինէր։ Բայց այդպէ՞ս էք մտածում դուք. գիտեմ որ իմ ունկնդիրների մեծ մասի համար բաւական է, որ ամբիոնի բարձրութիւնից քրիստոնէական խօսքը քարոզուի և հենց այդ տեղից նրանք սպասում են ճշմարտութեան տարածման։ Ճշմարիտ է, երբ քարոզը Աւետարանի աղով է համեմած, երբ նա հասնում է մարդկանց իղձին և սոսկումն առաջացնում, երբ նա աղմկում, շարժում է սիրտը, երբ նա միջոց է տալիս տեսնել անտեսանելի աշխարհը, քարոզը ճշմարտապէս մի երկսայրի սուր է, որի մասին յիշատակւում է Ս. Գրքում։ Լինի այդ քարոզը անմշակ, անարուեստ, կոպիտ, անշնորհ, բայց բղխելով սրտի խորին համոզմունքից, որ պարգևում է նրան քրիստոնէական հաւատը, մի զօրութիւն է ներկայացնում, որ կարող է կերպարանափոխել ամբողջ աշխարհը։ Բայց առանց վրդովման չէ կարելի մտածել այն մասին, թէ ինչի՞ նման է քարոզը երբ Աւետարանի աղը կորցնում է իւր ոյժը։ Քրիստոնէական հաւատով պատրաստուած ամբիոնի վերայ բարձրանում է մի մարդ՝ որ փոխանակ իրան ուղարկող Աստուծոյն ակնածութեամբ նայելու, մտածում է միմիայն իւր ունկնդիրների մասին. փոխանակ իւր առաքելութեան մասին մտածելու, մտածում է միմիայն իւր

դարի — գաղափարի վերայ, որին նա ցանկանում է հաճոյանալ. փոխանակ մարդկային խիղճը վրդովելու, մտածում է միմիայն նրան հանգստացնելու: Երբ նրա մասին ասում են որ նա յաջողութիւն ունեցաւ և ժողովրդականութիւն ստացաւ, կարծում են որ նրան փառաւորում են պատշաճաւոր գովասանքներով:

Բայց ժողովրդականութիւն ունէր սուրբն Պօղոս, երբ նրա ձայնը վրդովում էր յանցաւորներին և ամաչեցնում իմաստուններին: Ժողովրդականութիւն ունէր Քրիստոսը, երբ նա տեսնում էր որ ամբոխը հեռանում է նրանից տրտնջելով, դժգոհելով: Աստուած հեռու պահէ այդ տեսակ ժողովրդականութիւնից: Ճշմարիտ քարոզը այսպէս չպէտք է հասկանալ և այսպէս չպէտք է լինի: Քարոզը պէտք է կրէ այն բնաւորութիւնը ինչ որ կարճ, բայց ճշմարտապէս նկատեց Լիւդովիկոս ԺԴ-ը, որ սովոր էր պալատական քարոզիչների ստորաքարշ շողոքորթութիւնները լսելու: Մի վարդապետի, որ առանց թուլութեան Աւետարանը համարձակ քարոզում էր, ասաց մի անգամ. «Հայր, երբ լսում եմ ուրիշներին, բաւական եմ նրանց քարոզից, բայց երբ ձեզ եմ լսում, անբաւական եմ մնում ինքս ինձանից»: Նա արդար էր. և լաւ կլինէր եթէ նա չլսէր ուրիշ քարոզութիւններ. լաւ կլինէր եթէ նա իւր հրեշաւոր գոռոզութիւնը զգալով, ազատէր ֆրանսիան ամօթալի տեսարաններից, վերջ տար ճշմարիտ քրիստոնեաների դէմ յարուցած գազանային հալածանքներին, որոնք կատարվում էին ի շնորհս բարեպաշտութեան քօղով դիմակաւորուած կեղծաւորների և շողոքորթների: Լաւ կլինէր որ դուք ևս հեռանայիք քարոզչից անբաւական ինքներդ ձեզանից. հեռանայիք անհանգիստ, մինչև անգամ գրգռուած, վրդովուած սրտով, միայն թէ լուրջ մտածմունքներով: Բայց չխաբուինք. քարոզը որքան և ճշմարտութիւն պարունակէր իւր մէջ, այսուամենայնիւ բաւական չէ Աւետարանը տարածելու համար: Ինչ ինձ է վերաբերում, ցաւօք պէտք է խոստովանիմ, որ ես ապշած եմ մնացել նրա անզօրութեամբ: Մտածեցէք այն մասին, թէ բեմի վերայ որքան համոզմունք, ջանք, մտքեր և խօսքեր են վատնուում և դուք կնկատէք որքան չնչին է նրանց հետևանքը: Ինչո՞ւ այսպէս է. ի հարկէ սովորութիւնից և մանաւանդ մեր մէջ արմատացած այն գաղափա-

ըից, որ բեմական լեզուն քիչ թէ շատ պայմանական լեզու է. բեմը, ասում են, իւր վերայ ամեն բան ընդունում է: Այդ պատճառաւ ոչ ոք չէ զարմանում որ այդտեղից ընդհանրապէս պատերազմ եմ մղում անհաւատութեան և աշխարհային ունայնութեանց դէմ, հրաւիրելով մի և նոյն ժամանակ ղղջալ և ապաշխարել. Ընդհակառակն այդ սպասում, պահանջում են. և ինչպէս անհաւատը այնպէս և աշխարհիկ անձն այդ բնական են համարում: Նրանք առաջուց գիտեն որ այդպէս պէտք է լինի. և լսելով քարոզչին, իրանց դատողութիւնը տալով, այն և՛ բոլորովին բնական են համարում, որ նոյն իսկ եկեղեցւոյ դռների մօտ կրկին վերադառնան իրանց նախկին թեթևամտութեան, դատարկաբանութեան և աշխարհային ունայնութեանց: Ցուր ջանք կլինէր համոզել նրանց իրանց կեանքի եղանակը փոխելու: Նրանք, կարելի է, ասեն քարոզը սրտաշարժ էր. բայց մի բոպէ էլ չեն մտածել, որ խօսքը իրանց էր վերաբերում, իրանց սեպհական փրկութեան, մշտնջենական ապագային:

Ընդհակառակն դուք կամենո՞ւմէք տեսնել թէ խօսքը ո՞րտեղ է ներգործում, շարժում և անհետևանք չէ մնում: Մտէ՛ք դատարանի վանդակի միւս կողմը, նայեցէ՛ք ահա այն փաստաբանին, որը գուցէ առանց համոզմունքի պաշտպանում է դատարանի առաջ մի գործ՝ որի հետ կապուած են մեծամեծ շահեր: Նայեցէ՛ք ինչ լարուած ուշադրութեամբ լսում է գործի տերը. ինչպէս փայլում են նրա աչքերը. ինչպէս ձգվում են նրա երեսի գծերը, ո՞րպիսի հոգեկան անհանգըստութեամբ հետամուտ է լինում գործի ընթացքին. և այս ամենը նրա համար միայն, որ դատի վերջանալուց յետոյ նա ստանալու է մեծ հարստութիւն: Այդ ժառանգը, որ յափշտակուած է միայն մի ցանկութեամբ, գոնէ մի բոպէ մտածէր իւր փաստաբանի պաշտպանողական ճառի արտաքին ձևի մասին, նրա գրական արժանաւորութեանց, ձայնի ելևէջների, յաջող դարձուածների մասին: Շատ քիչ է հոգում այդ ամենի մասին. նրա միակ ցանկութիւնն է որ օրէնքը դիջող, բարենկամ լինի, որ ինքը գործը տանի. որից կախուած է նրա բաղդը. գործ՝ որ վերաբերում է իրաւանց խախտման, ժառանգութեան անկանոն վճռահատութեան և հարստութեան:

Դժբաղդաբար երբ ձեզ հետ խօսում են երկնային ժառանգութեան, ձեր հոգւոյ փրկութեան և Արդար Դատաւորի անփոփոխելի վճռի մասին, դուք առաւել կամ պակաս ուշադրութեամբ կամ հետաքրքրութեամբ լսում էք և ընդհանրապէս ամենայն ինչ ի նկատի առնելով տալիս էք ձեր կարճ դատողութիւնը — թոյլ, կամ հետաքրքիր էր քարոզը, որպէս թէ գործը վերաբերում է մի որևէ ճեմարանական ճառախօսութեան: Ահա թէ ինչու անմտութիւն է միմիայն քարոզից սպասել ճշմարտութեան տարածումը:

Բայց ի՞նչ միջոցով կարելի է այդ մի և նոյն ճշմարտութիւնները ներգործական և զօրեղ դարձնել: Դուք ոչ թէ եկեղեցում պէտք է նրանց լսեցնել տաք, այլ մի ուրիշ տեղ: Փորձեցէք այդ և դուք կնկատէք կորցրել է արդեօք Աւետարանի ազը իր ոյժը թէ ոչ: Երևակայենք որ դուք մի երիտասարդ մարդ էք և գտնվում էք ձեր հասակակիցների շրջանում, որոնք նոյն պարապմունքն ունին, ինչ որ դուք: Նրանք քննադատում են օրուայ կենդանի հարցերը պատանեկութեանը յատուկ համարձակութեամբ և անաչառութեամբ առանց կանգ առնելու ոչ մի խնդրի առաջ: Շուտով խօսակցութիւնը փոխվում է կրօնի մասին: Այն՝ ինչ որ դուք հաւատում էք, ինչ որ մենք քարոզում ենք, այնտեղ քննադատուումէ, ենթարկուում է յարձակման, գուցէ և ծաղրի առարկայ է դառնում: Դուք վրդովուում նեղանում էք, բայց և այնպէս լռում էք: Զարմանալի է, ո՞րչափ փոքրոգի են մարդիկ, երբ խնդիրն այն մասին է, որ պէտք է իրանց կրօնական համոզմունքները արտայայտեն, պաշտպանեն: Այդ մի և նոյն մարդիկ, որոնք առանց գունատուելու պատրաստ են մահուան հանդիպել և երկիւղ չկրելով ծաղրածութիւնից, ջերմութիւնից պաշտպանում են իրանց քաղաքական համոզմունքները, այստեղ երևում են երկչոտ, փոքրոգի, երերուն, որպէս զի մի ամենաթեթև ծաղրածութեան անգամ չհանդիպեն: Եթէ խնդիրը մի որ և է կրօնական կուսակցութեան, պապի աշխարհական իշխանութեան, ուղղափառների կամ ազատամիտների մասին է, այդ տեղ ոչինչ դժուարութեան չեն հանդիպիլ իրանց հայեացքները ազատօրէն արտայայտելու, իրանց համոզմունքները պաշտպանելու և իրանց ձայնը միացնելու այս կամ այն կուսակցու-

թեան հետ։ Բայց բանալ իւր սիրտը, ներքին հոգեկան աշխարհը, արտայայտել ինչ բանի որ հաւատում են, խօսել Աստուծոյ մասին այդ անկարելի է երևում։ Ֆրանսիայում և ընդհանրապէս, այն գաղափարն է պաշտպանուում, որ հաւատի խնդիրներով միմիայն հոգևորականութիւնը պէտք է պարապի. տարօրինակ ձգտումն։ Այսուամենայնիւ եթէ արհամարհելով այդ փոքրոգութիւնը համարձակութիւն ունենայիք քաջաբար, հաստատամտութեամբ և անկեղծօրէն խոստովանել ձեր հաւատը, ձեր յոյսերը, հաւատացած եմ որ այդ տեղ առաւել համոզեցուցիչ բան կլինէր, քան թէ նոյն իսկ մեր բոլոր ճառերի մէջ։ Ենթադրենք որ ձեր համոզմունքները մերժէին կամ ծաղրէին, բայց և այնպէս դուք ձեր ունկնդիրների մտքի մէջ յարգանաց զգացմունք կզարթեցնէիք. ձեզ այդ չէին կարող բացասել, և ո՞րքան էլ չխոստովանէին այդ, այնուամենայնիւ կհասկանային այն ամենը, ինչ որ այդ հաւատի մէջ վսեմ է և զօրեղ, թէև նրանց սիրտը չէ շարժում։

Եւ այդպէս խօսքը եթէ ճշմարտութեան ծառայացնենք, մեծ ոյժ է և երկրի ճշմարիտ ապը։ Դիտէք մինչև ո՞ւր է տարածվում նրա խորհրդաւոր ներգործութիւնը. ո՞րքան բազմաթիւ սրտեր նա կարող է նուաճել։ Պատմութեան իւրաքանչիւր էջերում նկատելի է խօսքի արտասովոր ներգործութիւնը, որը դուցէ արտասանուել է գաղտնի, բայց սրտի մէջ թափանցելով, դարձել է մի բարեբեր սերմ, վերանորոգել է կեանքը։ Եգիպտական դամբարաններում գտան հացահատիկներ, 3000 տարի առաջ ննջեցեալի ձեռքում դրուած. գցեցին հողի մէջ. նրանք ընձիւղներ արձակեցին և դեղեցիկ հասկեր տուին։ 30 դարը բաւական չէր եղել մթին գերեզմանում թագնուած սերմի զարմանալի կենսականութիւնը խեղդելու, ոչնչացնելու համար։ Եւ միթէ՞ դուք կարծում էք որ այդ նիւթի մէջ այդ տեսակ կենսական, զօրաւոր ոյժ դնող Աստուածը, թոյլ կտայ իւր հաւատի, յուսոյ և սիրոյ խօսքերը ոչնչանալու, որոնք դուք սերմանում էք ամբողջ աշխարհի անդաստանում։ Դուք մոլորվում էք. նրանք չեն կարող մեռնել. նրանք նոյնպէս ընձիւղներ կարձակեն, նրանց ծածկող խորութեանց մէջ։ Քրիստոնեայն, որ խօսում է յանուն կենդանի Աստուծոյ, երկրի աղն է։

Բայց ի՞նչ է նշանակում խօսքը առանց գործի. ի՞նչ ներգործութիւն կարող է ունենալ նա, եթէ մեր կեանքի յայտարարը չէ: Ի պատիւ քրիստոնէութեան, նա չէ կարող տարածուել, եթէ յայտնողը նախ և առաջ ինքը անձամբ չիրագործէ: Որպէս զի Աւետարանի աղը կարելի լինի ուրիշներին էլ հաղորդել, հարկաւոր է որ նա առաջ մեր մէջ թափանցի: Ուրիշ գործեր յաջողութեան կարող են հասնել հմուտ հռետորների, ճարտարախօսների միջնորդութեամբ. բայց աւետարանի գործը այդ ճանապարհով չէ կարող ընթանալ: Ենթադրեցէ՛ք որ եկեղեցին ունի ամենազօրեղ հռետորներ, բարոյագետներ, ամենաճարտար աստուածաբաններ, ամենախորին մտածողներ. բայց եթէ այդ եկեղեցին չունի սրբութիւն, նա չէ կարող հեղինակութիւն, ազդեցութիւն ունենալ:

Վերջին դարերում մենք տեսանք ապշեցնող օրինակ: Հազիւ թէ կաթոլիքական եկեղեցին իւր պատմական այլ շրջաններում ունեցած լինի այնպիսի հանճարներ և զօրեղ մտքի տէր անձնաւորութիւններ, որպիսիք էին Բոսսուէտ, Ֆենելոն, Մասսիլոն, Բուրդալու, և հազիւ թէ Փարիզի եկեղեցիները երբ և իցէ տեսած լինին դրանց նման քարոզիչներ, որոնք՝ առանձին առանձին վերցրած, կարող էին փառաւորել իրանց ժամանակաշրջանը: Մտքի խորութիւն, խօսքի գեղեցկութիւն, տրամաբանական զօրութիւն, կորովամտութիւն, համոզմունք, պայծառութիւն, շքեղութիւն, բանաստեղծութիւն. այդ ամեն յատկութիւնները կենդրոնացած էին դրանց մէջ: Ի հարկէ եթէ մարդկային խօսքը երբ և իցէ կարող է դրական ազդեցութիւն ունենալ, այդ՝ կարելի է ասել, առաւել դրանց ժամանակի մասին: Բայց այսու ամենայնիւ 30 տարուց յետոյ, խնամակալական իշխանութեան միջոցում անբարոյականացած ֆրանսիան արդէն պատկանում էր Վոլտերին և 18-դ դարի հետ դործը արդէն վերջացաւ. Նա ընկաւ: Եւ եթէ ֆրանսիան տեսաւ այս խորին և անյուսալի անկումը, այդ՝ այն պատճառաւ էր, որ այդպիսի հանճարեղ քարոզիչներ արտադրող եկեղեցու մէջ թափանցեցին անառակութիւն, կաշառակերութիւն, անբարոյականութիւն: Այն պատճառաւ, որ, չնայելով Պասքալին, խղճագիտութիւնը տիրեց մարդկային խղճի վերայ, կեղծաւորութիւնը դալտնի կերպով քանդեց եկեղեցւոյ հիմքը. ան-

հաւատութիւնը արագութեամբ տարածուեց նոյն իսկ հոգևորակա-
նութեան մէջ. այնպէս որ երբ փիլիսոփայութիւնը փոթորկի նման
բարձրացաւ Ֆրանսիայի վերայ, նա չհանդիպեց ոչ մի պատնէշի՝ որ
նրան կանգնեցնէր: Ո՞րքան ցաւալի է, որ այս բազմաթիւ փայլուն
աստղերի և հանճարների հետ, Ֆրանսիան չունեցաւ հեզահոգի,
կենսատու, հաւատարիմ, աստուածային ոգւով ներշնչուած եկե-
ղեցի, որ երկրի աղը դառնար:

Եւ այսպէս մեր կեանքն աւելի կիզիչ ներգործութիւն ունի, քան
մեր խօսքը: Խօսքի ներգործութիւնը ընդհատվում է, բայց կեանքի
ներգործութիւնը յարատև է: Ի՞նչ նշանակութիւն ունի ընդհա-
տուող ոյժը յարատև գործութեան առաջ: Ի՞նչ նշանակութիւն ու-
նի ամենակատաղի փոթորիկը համեմատաբար ծովային մակընթա-
ցութեան օրէնքի հետ, որ ամենայն օր և անվերջ շարժում է ամ-
բողջ ովկիանոսը, երբեմն վեր բարձրացնելով, երբեմն ցածացնելով:
Ի՞նչ նշանակութիւն ունի այն ուժգին զօրութիւնը որ դէպի եր-
կինքն է նետում հրաբուխի բոցավառուած լաւան, համեմատաբար
ձգողական զօրութեան հետ, որ դէպի երկրի կենդրոնն է քարշում
առարկաների ամեն մասեր: Այդպէս և ի՞նչ նշանակութիւն ունին
մեր խօսքը, մեր աղօթքները, բարեպաշտական արտաքին ցոյցերը,
համեմատաբար մեր առօրեայ կեանքի լռիկ, մնջիկ կենդանի քա-
րոզների հետ: Դեռ այս բոլորը չէ. մեր կենդանի ներգործութիւնը
ակամայ է և այդ պատճառաւ նա զօրել է: Իսկապէս թող չխաբ-
ուինք. մենք աւելի յաջողութիւն ենք գտնում ոչ այն ժամանակ,
երբ կամենում ենք ներգործել ուրիշների վերայ. ընդհակառակ նկա-
տելով այդ նպատակը՝ աւելի զգուշանում են: Նրանք գրահաւո-
րուում են մեր դէմ մռայլ թերահաւատութեամբ և փակում են
մեր առաջ իրանց սրտի մուտքը: Բայց ի՞նչպէս ազատուեն կեանքի
ներգործութիւնից, որ ամեն ժամ, ամեն րոպէ իւր արտադրած
պտուղներով, ոգևորող զգացմունք է զարթեցնում: Դուք այդ չէք
նկատում, որ տեսակ տեսակ եղանակներով թափանցելով խելքի
ու մտքի մէջ, թողնում է այնպիսի ներգործութիւն, որ ոչնչով չէք
կարող ջնջել: Այո՛, այն ժամանակ միայն կարելի է փրկարար ճըշ-
մարտութիւնը յաջողութեամբ տարածել, երբ նրան կատարելա-

պէս կմարմնացնենք մեր կեանքի մէջ։ Ամենագօրեղ և դրական միջոցը դա է։

Բացի դրանից ամենքը ընդունակութիւն չունեն լաւ խօսելու. բայց ցոյց տուէք մի քրիստոնեայ, որ իւր կեանքով անկարող լինի ներգործել աշխարհի վերայ։ Այս ներգործութիւնը անում է այն մարդը, որ բարձրաձայն բողոքում է անարդարութեան դէմ և կարծես ամպի որոտով զարթեցնում է ժամանակակիցների խիղճը։ Այս ներգործութիւնը անում է հիւանդախնամ կինը, որ հիւանդանոցի մահաբեր օդը շնչելով, եռանդով հսկում է այն հիւանդների վերայ, որոնց լափում է վարակիչ հիւանդութիւնը։ Այս ներգործութիւնը անում է քարոզիչն որ հեռանալով այն ամենից ինչ որ նրա սիրտը կարող էր սիրել և մռայլ անհաւատութեան առաջ աղօթում է, քարոզում է, սպասում է և փառաւորում Աստուծոյն իւր համբերութեամբ աւելի, քան ուրիշները իրանց մարտիրոսութեամբ։ Այս ներգործութիւնը անում է ջահել երիտասարդը որ փայլուն ասպարիզի մէջ մնած ժամանակ, ստիպուած լինելով մասնակցել անազնիւ գործերում, հրաժարվում, փշրում է իւր ապագան և լռութեամբ կպչում է ծանր աշխատանքին՝ իւր առօրեայ ապրուստը հայթայթելու։ Այս ազդեցութիւնը գործում է և գիտնականը, գրողը, որ ալեզարդ հասակումն անգամ անխոնջ գործադրում է իւր ոյժերը, ջերմութեամբ պաշտպանելով այն համոզմունքները, որոնցով նրա հոգին ապրում է։ Այս ներգործութիւնը անում է ջահիլ օրիորդը, որ այն հասակումն է, երբ աշխարհը հրաւէր է կարդում, առաջարկելով նրան ամենագրաւիչ հրապոյրներ. բայց նա հակառակելով՝ ընտրում է մի կեանք՝ որ լի է հաւատարմութեամբ և անձնազոհութեամբ յօգուտ մերձաւորի. և դրանով ներկայացնում է մեր առաջ նազելիութեան և գեղեցկութեան մի տիպար, որ զարդարուած է երկնային լուսոյ շողերով։ Այս ներգործութիւնը անում է և այն մարդը, որ Աստուածանից ստանալով ահագին հարստութիւն, մշտապէս և ջերմ սիրով նուիրում է նրան հաւատի և ողորմածութեան գործին։ Այս ներգործութիւնը անում է նոյնպէս և այն հիւանդը, որ մահուան անկողինում այլ ևս անկարող լինելով գործել, գուցէ և ողորմու-

թեամբ ապրելով, անտրտունջ ծառայում է Աստուծոյն, խոնարհեցնելով իւր գլուխը նրա հայրական աջի տակ. և իւր սրտաշարժ երախտագիտութեամբ սովորեցնում է մեզ կարմրել մեր անշնորհակալութեան համար:

Այս բոլոր տեսանելի և գաղտնի գործերը, այս բոլոր յայտնի և անյայտ գոհաբերութիւնները, այս բոլոր չարչարանքները, ինքնուրոյնութիւնը պահպանում են եկեղեցին, տարածում են ճշմարտութիւնը, փրկում են աշխարհը: Ոչնչացրէք այս ամենը, այնուհետև ի՞նչ կմնայ ձեր ձեռքում չարութեան ուժի դէմ: Ուրիշ ի՞նչ զօրութեամբ կարող կլինէք դուք ընդդիմադրել նրան, խորտակել նրա ոյժը: Ի՞նչ կպատահէր—եթէ սրբութիւնը մշտապէս չներգործէր քրիստոնէական գթասրտութեան հետ, որ ամեն օր, ամեն ժամ ներշնչում է եկեղեցուն և ամբողջ աշխարհին վերանորոգած կեանք: Ի՞նչ կլինէր ովկիանոսը եթէ նրա ջուրը կորցնելով ապիրութիւնը անհամանաը և իւրաքանչիւր մակընթացութիւնից յետոյ տիերում թողնէր մահառիթ, վարակիչ արտաշնչութիւնք: Ի՞նչ կպատահէր այն հասարակութեան հետ, որ կորցրել է Աւետարանի աղը: Ի՞նչ կպասէր ներկայ փայլուն քաղաքակրթութիւնը, որ կրում է իւր մէջ այսչափ սկեպտիկականութեան և քայքայման տարրեր: Նայեցէք հին աշխարհի վերայ 40 դարից յետոյ, աշխարհի՝ որ հեծում է բռնութեան տիղմի և անկարագրելի ապականութեան մէջ:

Սրանից բղխում է նոր ոյժով այն՝ ինչ որ ասացի մարդկային խօսքի մասին: Ես ասացի որ ճշմարտութեան խօսքը չէ կարող ոչնչանալ. բայց մի՞թէ կարծում էք, որ հաւատոյ, ողորմածութեան գործը կարող է երբ և իցէ ոչնչանալ. երբէք. նա մնում է բարութեան անսահման շրջանի մէջ, որ մեծանում, ամրապնդվում է մեր հաւատարմութեամբ, աղօթքներով և անձնազոհութեամբ: Որքան չճանաչուի և անընդունելի լինի նա, այնուամենայնիւ կծառայի նորան, որ Աստուծոյ արքայութիւնը երկրին կմօտեցնի: Անձնուրացութեան և ողորմածութեան իւրաքանչիւր սխրագործութիւն, եկեղեցւոյ համար յաղթութիւն է, չարութեան թագաւորութեան համար պարտութիւն: Ամենայն անձնազոհութիւն, որ

ազդում է հաւատը, ճշմարտութեան ամենաստոյգ յաղթանակն է կազմում: Մի քանի շաբաթ առաջ անգլիական մի նաւ խորասուզուեց ֆրանսիական ափերի մօտ, տանելով իւր հետ անյատակ ովկիանոսի մէջ 200 մարդկային արարածներ: Բայց այդ նաւի վերայ, այդ զարհուրելի տեսարանի և ուժգին փոթորկի ժամանակ աղօթքի մրմնջումներ էին լսվում, աստուածային խօսքը թնդում էր իւր բոլոր փառահեղութեամբ: Վերջին ըոպէում, երբ նաւից արձակում էին միայնակ մնացած մակոյկը, մի հերոսական տեսարանի հանդիպեցին: Կորնչողները մակոյկը թողել էին նրանց, որոնց կեանքը աւելի օգտակար էին համարել. և երբ մակոյկը հեռանում էր, արդէն ալիքների մէջ խորասուզուող նաւի տախտակամածի վերայ տեսան քարոզչի կնոջ, որ իւր վերարկուն հանելով դձեց մակոյկի վերայ, որպէս զի փրկուողներից մէկին՝ ցրտից պահպանէր: Քրիստոնէական սիրոյ այս սրտաշարժ և վսեմ քաջագործութիւնը միթէ՞ կարող է ծածկուած մնալ այն ովկիանոսի ալիքների տակ, որը ծածկեց այդ թշուառների դիակները. երբէք: Նա մշանջենապէս կենդանի կմնայ մեզ համար: Նա, պատուաւոր տեղ կգտնի այն հրաշալի պատմութեան մէջ, որտեղ գտնվում են այն ամեն անձնազոհութիւնները, որոնք դուրս է հրաւիրել աշխարհի վերայ Քրիստոսի ոգին: Այդ սխրագործութիւնը կմիանայ այն անընդհատ պատերազմի հետ, որ քրիստոնէական սէրը մղում է եսականութեան դէմ. նա՝ ճշմարտութեան յառաջադիմութեանը, առաւել լաւ կծառայի, քան մեր խօսքը:

Հենց այս ըոպէիս ես ցոյց տուի այն ազդեցութիւնը որ քրիստոնէական կեանքը պէտք է առաջացնի իւր շուրջը: Բայց այդ պատկերի մէջ արդեօք դուք ձեզ տեսել — ճանաչել է՞ք, և ձեր շրջապատողների վերայ թողել է՞ք այդ թափանցող ներգործութիւնը:

Ի զուր են դատապարտում խիստ բարեպաշտութիւնը, որ խորշում է մարդկանց հետ շփուելուց. մինչև անգամ հեռանում է հասարակական կեանքից և սրբութիւնը կարելի է համարում միայն այն շրջանում, որի մէջ ինքը փակուում է: Ասում են, որ քրիստոնեան իւր ժամանակակիցների հասկացողութեան, կեանքի ուղղութեան հետ պէտք է յարմարուի, և որ չկայ մարդկային գործունէու-

թեան ոչ մի շրջան, որտեղ կրօնը չկարողանար թափանցել. նա՝ եւ քաղաքականութեան, եւ գիտութեան, եւ գեղարուեստի, եւ գրականութեան մէջ է: Ի՞նչպէս կարելի է, որ չապականուած սիրտը չուրախանար նկատելով այս բոլոր իրան սպասող ճանապարհները. ուրախութեամբ նա այնտեղ ներս կմտնէր: Բայց ՝արց է թէ՝ նրան կյաջողի՞ աշխարհ մտնել Քրիստոսի ոգւով: Եթէ նա կորցնելու է բարեպաշտութեան խիստ բնաւորութիւնն և դառնալու է աշխարհում տիրապետող գաղափարներին, զգացմունքներին և լեզուին, առաւել լաւ է նրա համար առանձնութիւնը, որովհետև առանձնութիւնը, չնայելով որ տարօրինակ և մռայլ բան է, այսուամենայնիւ այժ է: Հեռանալով մարդկանցից կարելի է նրանց վերայ ներգործել աւելի ուժով, քան որքան մտածում են: Մենք դանգատվում ենք որ հազուագիւտ են սեպհական համոզմունք և զօրաւոր բնաւորութիւն ունեցող մարդիկ, բայց այդ տեսակ համոզմունքներ և բնաւորութիւններ աշխարհում ձեռք չեն բերվում: Ճանապարհի եզրում և քաղաքային փոշոտ այգիներում դուք չէք տեսնիլ կաղնի, որ դէպի երկինք բարձրացներ իւր հսկայամարմին բունը և ամեն կողմի վերայ տարածէր իւր լայնածաւալ, զօրաւոր ոստերը: Այդպէս և աշխարհային շրջանների քնքշացած մթնոլորտում, դուք չէք տեսնիլ զօրաւոր, քաջասիրտ մարդիկ, որ ընդունակ լինէին ցանկանալ և ներգործել: Ամենամեծ մարդարէները ապրում էին անապատում:

Այդպէս և նա՝, որ ցանկանում է ճշմարտութեան քարոզիչ լինել պետք է ճանաչէ բարոյական առանձնութիւն: Ամենալաւ հասարակութիւնն էլ թուլացնում է մեր ջղերի զօրութիւնը: Մենք ինքներս չնկատելով ենթարկուում ենք ուրիշների կարծեաց ազդեցութեան և շատ անգամ զոհում ենք նրանց այն՝ ինչ որ լաւ է մեզ համար. զոհումենք ճշմարտութեան այն մասը, որը աշխարհ մտցնելու կոչուած ենք: Ես վստահանումեմ պնդել, որ բարոյապէս հիւանդ կարելի է համարել այն կրօնական հասարակութեան, որը չգիտէ հոգւով կենդրոնանալ Աստուծոյ առաջ: Աշխարհում ապրելով դիւրութեամբ դրաւուում են տիրապետող գաղափարներից, նախապաշարմունքներից և անարդարութեամբ դէպի մարդիկ: Աշխարհում ապրելով բարեպաշտութեան ամենատեսակ դիմակներ կարելի է կրել,

ինչոր միայն նորաձևութիւն է համարուում։

Եւ այսպէս ի՞նչ կարող է առաջանալ եթէ քրիստոնեական անմիտաբար շփուէր նրանց հետ, որոնց խորթ և օտար են նրա հաւատն ու յոյսերը։ Նա չէ նկատում որ այդ վտանգաւոր հաղորդակցութեան մէջ ամեն բան կորցնել կարող է և ոչինչ չշահիլ։ Եւ ճշմարիտ, նայեցէք ո՞րպիսի արագութեամբ աշխարհին յաջողում է խլել նրանից այն համոզմունքները, որոնք կազմում են նրա զօրութիւնը։ Դրա համար նա գործադրում է ամեն բան. սպառնալիք, վրէժ, խոստմունք, երկիւղ. և ահա հասնում է այն օրը, երբ այլ կորցնում է իւր զօրութիւնը։ Այնուհետև տխրութեամբ հարցնում ես. արդեօք նա կարող կլինի՞ երբ և իցէ նրան ձեռք բերել։ Եւ որքան քրիստոնէական կեանքեր, որ երբեմն լի էին ամենայն ջերմութեամբ, ունեցել են այս տեսակ ցաւալի վախճան։ Աշխարհը աւելի և աւելի ամրապինդ փաթաթում է նրանց իւր ցանցի մէջ, հարստահարում, ուժաթափ է անում։

Այդպիսիներից այլ ևս ոչինչ բարիք մի՛ սպասէք։ Ոգորմածութիւնը աւելի և աւելի անհնարին է դառնում. և Աստուծոյն ծառայելու միտքը այլ ևս հրապոյր չունի և չէ հրապուրում նրանց սիրտը։

Տէ՛ր, ազատի՛ր մեզ այս տեսակ վախճանից և ներշնչելով մեր սրտի մէջ փրկարար ճշմարտութիւնը, զօրացրու մեզ՝ հաւատարմութեամբ և հաստատամտութեամբ ծառայելու Նրան ցգերեցման։

(Բէրոէէ)։ Խ. Ք. Խ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Բ.

ՍՏՐԿՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ.

(ՇԱՐՈ-ՆԱԼՈ-ՐԻ-Ն)

Բովանդակ-Ի-Ն գլխոյ: Ստրկութիւնն անբարոյականացրեց տէրերին և ստրուկներին հին աշխարհում: — Հռովմայեցւոց կայսերութեան մէջ չկային օրէնքներ, որոնք սահմանափակէին մեծատանց հաճոյքը: — Կայսրների փորձերն այս օրէնքները դնելու անյաջող եղան: — Այս անյաջողութեան պատճառները: — Նախնի մատենագիրների թողած նկարագիրն այն խստութեանց օրինակների, որ տէրերը գործ էին դնում ստրուկների դէմ: — Այս գործում մեծատուն տիկնայք մրցող են դուրս գալիս տղամարդոց հետ: Եուվենալի և Օվիդիոսի թողած նկարագիրը մեծատուն հռովմայեցի կնոջ իւր զարդարանաց ժամանակ: Լուկիանի և Սենեքայի թողած պատկերները մեղկացած հռովմայեցի մեծատան պարապ կեանքից: — Ստրկութիւնն ապականում է երիտասարդ մեծատանց, սոցա քնքոյշ հասակից սկսած: — Ստրուկ—ստնտուներն և ստրուկ դաստիարակներն անխիղճ կերպով ի չարն են գործ դնում ծնողաց հաւատարմութիւնը: — Ստրուկների հաճոյակատարութիւնն ապականում և գեղեցացնում է երիտասարդ տէրերին և զարգացնում ամենամօթալի անառակութիւն երիտասարդ մեծատանց տներում: — Պլաւտոսի թողած մի քանի ընտանեկան պատկերներն այս կեանքից: — Հռովմայեցի մեծատուն կանանց գեղեցկութեան օրինակները և կայսրների նորա առաջն առնելու ճիգերը: — Ստրուկների դառն վիճակը հին հասարակութեան և գերդաստանի մէջ: — Ստրուկն, ըստ հասկացողութեան հնոց, հոգի չունի, նա անձնաւորութիւն չէ, բանական արարած չէ, այլ անբան կենդանի: — Նրան տալիս

են մականուն, ինչպէս շան, բայց նա մարդկային անուն չունի: — Ստրուկը չպէտք է և չէ կարող ունենալ ընտանիք: — Մի քանի տէրեր ամենևին թոյլ չեն տալիս ստրուկներին ամուսնանալ: — Միւսները ստրուկների ամուսնութեան վերայ նայում են, ինչպէս արդեանց աղբիւրի վերայ և նպաստում են ստրուկների հօտի բազմանալուն, իրանց օգտի համար: — Մի քանի ստրկատէրեր ստրուկ կնոջ խոստանում են ազատութիւն երեք զաւակների համար, որոնք մնում են ստրուկ նոցա տիրոջ տանը: — Հռովմէական իրաւաբանութիւնը չէ ընդունում պսակ ստրուկների մէջ, մինչև անգամ չէ ճանաչում նոցա մէջ ազգականութիւն, չտեսնելու է դնում կանանց հասարակաց լինելը նոցա մէջ և արեան խառնումն: — Երբ ստրուկ կինը ծնում է, տէրն իսկոյն առնում է նորածին որդուն և ծնողներն իրաւունք չունին նրան իրանցը համարել. տէրը կարող է ստրկի ընտանեաց անդամներին ծախել զանազան անձանց: — Ստրուկների անձնազոհութեան ազնիւ օրինակներ և այսպիսի դէպքերում արտայայտուած ծնողական և ամուսնական զգացմունքները նոցա մէջ. տէրերի խստասրտութիւնն այսպիսի դէպքերում: — Ստրուկների ծանր վիշտը մեծատանց տներում, որոնք նրանց յուսահատութեան են հասցնում: — Յուսահատութիւնը երևում է ստրուկների շուայտութեան մէջ և հասցնում է նրանց անձնասպանութեան և խելագարութեան:

Հեթանոսական փիլիսոփայութիւնն անկարող է ստրկին մխիթարութիւն տալու՝ նա նրան խորհուրդ է տալիս իւր թշուառ դրութիւնից ազատուելու համար դիմել միակ միջոցին — այն է անձնասպանութեան: Վշտալի վիճակ կին — ստրկի հին աշխարհում: — Անել վիճակ արձակուած ստրկուհիների: — Բարձր զգացմանց օրինակներ հին աշխարհի ստրկուհեաց մէջ

Մինչև ցայժմ զննում էինք ընկերական և տնտեսական չարիքն, որ ստրկութիւնն մոցրեց հին աշխարհը: Այն չարիքն երևեցաւ հին հասարակութեան կեանքի խանգարման մէջ, հարստութեան անկանոն բաժանման մէջ, ձեռագործութեան և առևտրի պահմանա-

փակման և երկրագործութեան անկման մէջ։

Աւելի և ս վնասակար եղաւ ստրկութեան ազդեցութիւնը հասարակութեան բարոյական վիճակի վերայ։

Դրականապէս կարելի է ասել, որ ստրկութիւնն անբարոյականացրեց հին աշխարհը։ Մենք տեսանք որ ազատ աշխատանքի բացակայութիւնն այնպիսի ազգատութեան հասցրեց ժողովրդականներին (պլեբէյներ), որ պետութիւնն ինքն և մասամբ էլ մեծատունք ստիպուած էին հոգալու պարապ ժողովրդեան բազմութեան ապրուստը։ Ժողովուրդը վարժուեցաւ նպաստ ստանալու, իբրև օրինական հարկ և սովորելով ապրել ուրիշի հաշուով անընդունակ դարձաւ աշխատանքի համար, թուլացաւ և ընկաւ ստորնութեան և գեղխութեան մէջ։ Բայց աւելի դառն հետևանք ունեցաւ ստրկութիւնը հասարակութեան անկման պատճառ եղողների՝ տէրերի և ստրուկների համար։ Տէրերն ապականեցին ստրուկներին և սոքա տէրերին, աստիճանաբար երկուսի բարոյականութիւնն էլ աւելի և աւելի ստորացաւ նրանից, որ տէրերին տուած էր իրաւունք ամէն ինչ պահանջելու և ամէն ինչ գործելու անպաշտպան ստրկների հետ, իսկ վերջիններին մասն և բաժին ընկել էր համբերութեամբ ամենայն ինչ տանել։

Ախտերն ընդարձակ արմատներ են գցում հին հասարակութեան մէջ, ընտանեկան կապերը սկզբում թուլանում են, իսկ յետոյ բոլորովին լուծուում և ընտանիքը դադարում է պետութեան նեցուկը լինելու։ Ստրկութեան հին հասարակութեան վերայ ունեցած ազդեցութեան այս վերջին կողմը կլինի մեր գնութեան առարկայն ներկայ դիտում։

Ոչ մի տեղ և երբէք այնպիսի անսահման իշխանութիւն կենդրոնացած չէ եղել, որպիսին ունէր կայսերութեան ժամանակի հռովմայեցի մեծատունը ստրուկների վերաբերութեամբ։ Մի մեծատան ծառայութեան և զուտաճութեանց համար այստեղ նշանակուած էին ստրուկների ամբողջ խմբեր։ Այս թշուառ խմբերի համար օրէնք էր միայն նոցա տիրոջ հաճոյքը։ Եթէ տէրն անգութ էր, սա ունէր իրաւունք չարչարելու իւր ստրուկներին, որքան կուզէր, զրկելու նրանց կեանքից ամենատեսակ և չարալուկ եղանակներով, առանց

պատասխանատուութեան մէկի առաջ։ Եթէ նա անառակ էր և խառնակեցիկ, նորա ստրուկների բազմութիւնը պարտական էր կորցնելու ամէն ամօթ։ Ի զուր ոմանք Կայսրներից կամեցան օրէնքներով սահման դնել ստրկատէրերի կամայականութեան և խստութեան. նոցա բարենպատակ փորձերը շատ թոյլ հետևանքներ էին ունենում. օրէնքի մեռեալ տառը անկարող էր փոխել բարքերը։ Օրէնքն միայն այն ժամանակ մեծ ոյժ ունի, երբ թէ օրէնսդիրն և թէ հասարակութիւնն, որոյ համար նա գրուում է, համոզուած են օրէնքի անհրաժեշտութեան և արդիւնաւորութեան մէջ։ Հռովմայեցի ընտիր կայսրներին շրջապատողները սովորաբար ստոյիկեան փիլիսոփայք էին. նոքա էին կայսրներին թելադրում հակաստրկական օրէնքները, բայց հասարակութիւնն, որ հասել էր գեղեցկութեան և կամայականութեան վերին աստիճանին, միշտ թշնամաբար ընդունում էր այսպիսի օրէնքներն և աշխատում էր նրանց դանցառութեան տալ։ Միւս կողմից օրէնստուն պէտք է ինքն անպայման կերպով բարձր լինի այն հասարակութիւնից, որին նա օրէնք է տալիս և ամենից առաջ յարգէ օրէնքն՝ բայց ի՞նչ ներգործութիւն կարելի է անել, երբ ստրկութեան դէմ օրէնստու դուրս է գալիս զորինակ Ներոնն, որ օրէնք հրատարակեց, որով հրամայում էր քաղաքների կառավարիչներին «ընդունել դանդատներ ստրուկներից, եթէ նոքա զոհ են դառնում իրանց տէրերի խստութեան, գեղեցկութեան և ժլատութեան և որ չէր թոյլատրում «ատանց օրինաց պատասխանի», այլ լոկ տիրոջ վկայութեամբ դատապարտել ստրկին դառնալու կերակուր վայրենի դազաններին»։ Խիստ Դոմիտիանոսը կրկնեց Ներոնի այս օրէնքներն և բացի դրանից արգելեց «տէրերին անգթութեամբ կամ անբարոյականութեամբ խեղել ստրուկներին և կամ վաճառել նրանց սուսերամարտիկների խմբերի համար»։

Անտոնիոս հրամայեց դնել տէրերից այն ստրուկներին, որոնք կը-դիմեն կայսեր արձանի պաշտպանութեան։ Անդրիանոս և Անտոնինոս փորձ փորձեցին պատժել անգութ տէրերին. առաջինը մինչև անգամ մի տմարդի մեծատուն կնոջ աքսորքի դատապարտեց, իսկ երկրորդը մի բարբարոս ստրկատիրոջ զրկեց բոլոր ստրուկներից։ Բայց հասարակութիւնն այնպէս ապականուել էր, որ այդպիսի օ-

ըէնքների վերայ գրեթէ ուշադրութիւն չէր դարձնում, որ ապացուցանում է նրանով, որ մի և նոյն օրէնքները գրեթէ ամեն կայսերները կրկնում էին մինչև Կոստանդիանոս Մեծը: Իսկապէս այդ օրէնքներն ոյժ և զօրութիւն ունենալ էլ չէին կարող, երբ մի քանի կայսրներ, սոցա շարքում և Օգոստոսն, իրանք մեղանչում էին նոցա դէմ, անձամբ խստութեան օրինակները ցոյց տալով: Այսպէս Մակրինոս կայսրն իւր ընդծիններից կէս պլէոշ էր անուանում իւր անասելի անգթութեան համար դէպի ստրուկները:

Սենեքան իւր de ira (յաղագս բարկութեան) երկասիրութեան մէջ թողել է «ոչոչափելի յիշատակներ այն խոսքերից, որոնք ոչոչափելիները Ռոյլ էին պալիս երանց գրգիռներին պատճառելու»: Սարսափի ազդեցութիւնից այս ազնիւ մարդու սրտի խորքից բղխում են աղաչանք հարուստներին, մեծատուններին և իւր ժամանակի կառավարիչներին, որպէս զի նոքա իրանց վարմանց մէջ անպաշտպան թշուառ ստրուկների հետ չափաւորեն իրանց բարկութիւնը: Բայց կարծես, նորա պաղատանքներն էլ այնքան ազդեցին հասարակութեան վերայ, որքան ազդեցութիւն արաւ Սենեքայի նոյնանման գիրքը De clementia (յաղագս գթութեան), որ նա նուիրել էր իւր մարդասպան տանտէր՝ Ներոն կայսեր: Քանի որ հռովմայեցիք աւելի բարոյապէս ապականուում էին, նոցա բնաւորութիւնը թուլանում էր և նոցա մէջ վարթում էին գազանական բնազդումներ: «Մեղկ թեթևամիտ կեանքն, ասում է փիլիսոփան, մարդոց դիւրագրգիռ է անում: Արդեօք չէք նկատում դուք, որ ինչքան հարստութիւնն աւելանում է, այնքան զօրանում է և խստասրտութիւնը: Նայեցէք հարուստների, ականաւոր անձանց վերայ, կառավարիչների վերայ՝ յաջողութիւնը փքում է և կարծես զօրացնում է նոցա սրտի դաժանութիւնն ու թեթևամտութիւնը: Նոցա ականջները վարժուում են շողոքորթութեան և փայփայանքների, բաղդաւորութիւնը սնուցանում նոցա մէջ բարկացկոտութիւն: Եւ այն որպիսի՛ բարկութիւն: Սա անզուսպ փոթորիկ է, որ սարսափ պէտք է բերէ նոյն իսկ բարկացողի վերայ և որոյ գործիքներն են՝ դատ, խարազան, բանդ խաչ, խարոյկ, երկաթեայ ճանկեր, շղթայ, ամենատեսակ կտտանք,

շանթացած երկաթ ճակատի վերայ խայտառակութեան կնիքը դրոշմելու համար, վայրի դազաններով լի այրեր: Մեզ յայտնի է հների անգութ սովորութիւնը դրան մուտքի մօտ շղթայակապ անել ստրուկ — դռնապանին այնպիսի շղթայով, որով մենք կապած ենք պահում գամփռ շներին. դեռ Պլաւտոսի ժամանակ այս սովորութիւնը գործածական էր:

Կղաւտիոս կայսեր ժամանակ հրատարակուեցաւ օրէնք, որ արգելում էր խստասիրտ տէրերին իրանց հիւանդ ստրուկներին Տիբերին գետի մէջտեղում գտանվող ամայի կղզին տեղափոխելու և այստեղ յանձնելու նրանց բաղդի բերմունքին: Այլ տէրեր իրանց հիւանդ ստրուկներին մորթել էին տալիս ինչպէս անասուններին, որ մենք տեսնում ենք նոյն իսկ օրէնքից: Սենեքան պատմում է, որ Վեդիոս Պոլլիոնոսը իւր յանցաւոր ստրուկներին գցել էր տալիս մուռենէս ձկների ձկնոցն, որպէս զի այդ համեղ ձկները կերակրուին մարդոց դիակով և գիրանան: Խստասրտութիւնը մի քանի մեծատանց մէջ դառնում էր սովորութիւն, նոքա կարծես ախորժում էին արեան ճաշակին և մսի հոտը կարծես նոցա վերայ մի տեսակ առանձին արբեցուցիչ ազդեցութիւն էր գործում:

Վալերիոս Մեսսալան, որ Օգոստոսի ժամանակ փոխ-հիւպատոս էր Ասիաում, մի օրում 300 հոգի մահուան դատապարտելով գլխատած զոհերի մէջ շրջելով ասում էր. «ես արքայական գործ կատարեցի»: Ագենիոս Պոլլիոնոսն իւր նամակում առ Կիկերոն պատմում է յայտնի մեծատուն Բալբայի մասին, որ նա հրամայել էր մի հովվայեցի քաղաքացու դազաններին կուր տալ. նորա փ[illegible] [illegible]էրպոբանէ համար: Ամենապատուաւոր անձինք, ասում է Սենեքան, զայրանում էին, եթէ աւազանի համար պատրաստած ջուրը չէր լինում որոշեալ աստիճանի ջերմութեան, եթէ ստրուկը կոտրում էր մի ապակեայ աման, եթէ նորա ոտնամանները լաւ մաքրած չէին, եթէ ստրուկը շուտով չէր կատարում տիրոջ հրամանը, եթէ տիրոջ մատուցած ըմպելիքը գովարար չէր, եթէ անկողինը լաւ փռած չէր և կամ սեղանը լաւ յարդարած չէր: «Եթէ ստրուկը կհազայ կամ կփռշտայ ճաշի ժամանակ, շարունակում է նոյն մատենագիրը, եթէ նա մեծ եռանդով չէ քշում ճանճե-

ին մեզանից, եթէ նա յանակնկալս վայր կգցէ բանալին, մենք կատաղում ենք: Եթէ նա կահկարասիքը շարժելիս աղմուկ է հանում, եթէ նա չգիտէ գինին ձեռով պաղեցնել, մենք դիւահարուում ենք: Եթէ մեր ստրուկն արտասանում է խօսքերը բարձրաձայն, եթէ նորա երեսը տխուր է, եթէ նա խօսքերն այնպէս ցած ձայնով է արտասանում, որ մենք չենք կարողանում լսել, ի՞նչ իրաւունք ունենք նրան խարազանով ծեծել և կամ հրամայել շղթայակապ անելու: Ընդհակառակն հէնց այսպիսի չնչին պատճառներով մարդոց շղթայակապ են անում, անխնայ ծեծում, յաճախ այնպէս խիստ են ծեծում, որ խեղանդամ են անում, ատամները փշրում և ահա մարդն ընդ միշտ խեղաց է միայն այն պատճառով, որ մենք չպսպեցինք մեր բարկութիւնն և չիմացանք համբերութեամբ կինուելու»: Ստրկութիւնն այնքան ապականեց բարքերն, որ ամեն վերաբերութեամբ օրինաւոր և հեզ մարդիկն էլ իրանց համար անպատիւ և խայտառակ գործ չէին համարում ստրկին տանջելը: Պլուտարքոս, որ մեծ մարդոց սիրագործութեանց նկարագիրը մեզ թողեց, մի բարձր կրթութեան տէր անձն էր. բայց նոյնպէս ապատ չէր խստութիւնից դէպի ստրուկները:

Պատմում են, որ մի օր նա տեսնելով ստրկի չարաճճիութիւնը, հրամայեց նորան ծեծել: Ստրուկը, լինելով ուսեալ անձն, Պլուտարքոսի գրութիւններից վկայութիւն առաջ բերեց բարկութեան վնասի մասին: Այն ժամանակ Պլուտարքոս սկսաւ ապացուցանել, որ ինքն ամենևին չէ բարկանում և դառնալով դէպի դահիճն ասաց, «մինչև որ մենք քո ընկերոջդ հետ փիլիսոփայութիւն կանենք, խնդրեմ, դու նրան ծեծիր մտրակով»: Եուվենալոսը պատմում է Ռուտիլիոսի մասին, որ նրան ոչ մի երաժշտութիւն այնպէս չէր դուր գալիս, ինչպէս մտրակների ձայնը կամ Պոլիֆեմոսի մասին, որ երբէք այնպէս ծիծաղած չէ, ինչպէս երբ երկու անձեռոցիկների կռուստի համար պատահեցաւ հրամայել դահճին շանթացած երկաթով կնիք դրոշմել ստրկի վերայ: Պետրոնիոս ասում է, որ մի անանշան յիմար անձն Տրիմալչիոն հրամայում է խաչել Միհրդատ ստրկին նորա համար, որ այս խեղճը ծիծաղել էր տիրոջ վերայ: Սենեքան նկատում է, որ իւր ժամանակի մեծատանց գրեթէ բոլոր օրն

անցնում էր ստրուկների դատաստանն անելում ու նրանց պատժելում։

Մի դար Սենեքայից յետոյ, Դիոն Խրիզոստոմոս իւր շարադրութիւններից մէկի մէջ գոչում է. «Ո՛հ որքան հոգսերի առիթ են լինում մեզ այս ստրուկները։ Տէրը միշտ պիտի անհանգիստ լինի վէճերով նոցա հետ, նրանց պատժելով և խարազանելով, հարկը պահանջում է անդադար յանցաւորներին շղթայակապ անել կամ փախստականներին կալանաւորելու համար մարդիկ արձակել նոցա ետևից։

Կանայք հին աշխարհում պակաս խստաբարք չէին, քան տղամարդիկ։ Ո՞վ չէ յիշում Եուվենալի երգիծաբանութեան սարսափեցուցիչ վեցերորդ տունը, ուր նկարագրած է Հռովմայեցի տիկնոջ յարդարանքը։ Դահիճը դանակոծում է խղճուկ ստրկուհուն։ Այս միջոցին նորա տիրուհին սնդուրուում է, շատախօսում է իւր ընկերների հետ, հրամայում է իւր առաջ փռել ոսկեթելով կարած իւր շորը։ Դահիճը շարունակում իւր գործն և երբ ձեռքերը կախ են ընկնում դադրելից, տիրուհին իւր քաղցր ձայնով գոչում է նոր ծեծուած ստրկուհուն «Այստեղ է՛կ»։ Աղախինը ներս է մտնում և տիրուհին դառնում է դէպի նա նոր յանդիմանութիւններով։ Խեղճ Պսիխէան, որոյ մազերն անկարգ են նոր ստացած տանջանաց պատճառով, ուսերը մերկ, կուրծքը բաց, սկսում է տիրուհու մազերը յարդարել։ Ինչո՞ւ այս խոպոպիկը դանդրացրած չէ. կրկին բարկանում է տիրուհին։ Դահիճը նորից կպատժէ ստրկուհուն այն մազերի համար, որոնք չեն կամենում դանդրուել։ Պսիխէայի յանցանքն ի՞նչ է։ Նորա մեղքն է, որ տիրուհու պատկերն իրան չէ դուր գալիս։ Օվիդիոսի Կորիննան հարիւր անգամ ստիպում է աղախնին փոխել մազերի յարդարանքը. բայց գնդասեղով չէ ծակծըկում նրան կամ սանդրով չէ ճանկռտում, ի մեծ զարմանս Օվիդիոսի։ Կորիննայի այսպիսի հեզութիւնը գուցէ նրանից էր, որ Օվիդիոսը մի անգամ իւր զգուանքն էր յայտնել այնպիսի գեղեցիկ կանանց մասին, որոնք լացացնում են իրանց աղախիններին, նոցա մազերը յարդարելու ժամանակ։ Բայց Կորիննան էլ ազատ չէր խրատութիւնից։ Օվիդիոսն ամեն օր տեսնում է նորա դունապանին շրջթայած տան դռների մօտ և այս խղճուկը շատ անգամ Օվիդիոսի

պաշտպանութեամբ միայն իւր ուսերը մտրակի հարուածներից վերծ պահեց: Նուվենալոս գրում է, որ մի տիկին խնդրում է իւր ամուսնուն խաչել մի ստրկի և երբ ամուսինը չէ կամենում կատարել նորա խնդիրը, կինն արհամարհանքով ասում է. «Թշուառական, դա հօ ստրուկ է, միթէ ստրուկը մարդ է»:

Ահա այդ էին մեծ Հռովմի և հին դասական դարերի ստրկատէրերը: Նոցա տմարդութիւնը սոսկալի բան էր, նոցա բարկութիւնը սահման չէր ճանաչում և գործ էր դնում ամեն տանջանք և կոտանք. նոքա առանց պատասխանատուութեան սպանում էին թշուառ էակներին, որոնք յանձնուած էին նոցա լիազօր իշխանութեան: Ցաւալի է յիշել, որ աննշան մի սխալանք, կամ մի շաղակրատի-խաբեբայի գուշակութիւն յաճախ խեղճ ստրկին կեանքից էր զրկում: Աւելի ցաւալի է, որ այս խստութիւնը առաջանում էր ոչ թէ գչարութիւնից, այլ բնական էր և հետևանք ստրկատիրոջ մեղկութեան, նորա անընդունակութեան, անսովոր լինելուն անձամբ մի գործ կատարելու, նորա դալկացման, որ թոյլ չէր տալիս նրան որ և է ճիգն թափելու: Այս մեծատուններն առանց կամքի, առանց խելքի, ջղային, ամեն բանի վերայ գանգատող, թոյլ, ընչին անձինք գոլով, ներկայանում են իբրև ողորմելի էակներ և կենդանի արտայայտութիւնք այն չարեաց, որ հասցնում է հասարակութեան ստրկութիւնը: Նրանցից ոմանք, չգիտենալով թէ ինչպէս անցնեն իրանց ժամանակը, անց էին կացնում օրը հրամայելով տեղափոխել իրանց սենեակից սենեակ, տնից տուն, ման ածել իրանց բազկաթոռի կամ պատգարակի վերայ նստած. այլք անցկացնում էին օրն ամեն ժամ աւազան մտնելով և յետոյ ուտելով: Եթէ նոքա գնում էին զբօսնելու, ստրուկների բազմութիւն գնում էր նոցա առաջից և իրանց տէրերին նախազգուշացնում էին, թէ որտեղ պէտք է իջնել և ուր բարձրանալ, իսկ իրանք տէրերը նմանում են կոյրերի, ասում է Լուկիանոս: Ահա այդ երջանիկներից մէկն (Beatus), ինչպէս կոչում են նրանց բանաստեղծները, դուրս է գալիս աւազանից, նրան նստեցնում են աթոռի վերայ, բայց նա գիտէ արդեօք, որ ինքը կենդանի է: Ահա նա նստում է ճաշելու. բազմաթիւ ստրուկներ շրջապատում են նրան.

սոքա գիտեն նորա բոլոր սովորութիւնքը, նոցա համար հասկանալի են նորա ակնարկները ու շարժուածքները, նոքա գիտեն թէ որ կերակուրը նրան դուր է գալիս և որից նա զզուել է, նոքա գիտեն նորա ախորժակը բանալու միջոցը: Նոցա տիրոջ բոլոր զգացմունքները բաւարարութիւն են գտնում՝ նորա անկողինը ծածկած է վարդերով, նորա աչքերը զբաղուած են գեղեցիկ ներկայացումով, որ կատարուում է ճաշի ժամանակ, նորա լսելիքը զուարճանում են ախորժելի երգեցողութեամբ և երաժշտութեամբ, մինչև անգամ նորա մարմինը շփող և մերսող առանձին ծառաներ կային: Ամենքն աշխատում են այս անկենդան դիակի մէջ առկայծել դէթ զգացմանց մի կայծ: Այս մարդիկ, աղաղակում է Սենեքան, աւելի հոգ են տանում իրանց մազերի քան հայրենեաց վերայ. նրանց աւելի մազերի յարդարումն է զբաղեցնում քան հայրենեաց վիճակը: Այս շուայտասէրների մէջ մի որոնէք ոչ պաշտպան և ոչ վրէժխնդիր հայրենեաց»: Սարսափելի խօսքեր, որոնք ցոյց են տալիս, թէ ստրկութիւնն որպիսի խորին բարոյական անկման հասցրեց հին աշխարհը:

Հին աշխարհի ռեֆորմանց բարոյական անկման խորությունը աւելի լայնամասնաւոր, երբ հայեցուք գոյնոք հարուստ էրիտասարդների դասակարգը: Սարսափելի յանցաւոր դասակարգությունը զերծացնում է ապականումից էրիտասարդների սոցիալական հասակում, երբ մարդուս հոգին առանձնապէս ընդունակ է լինում արտաքին տպաւորութիւնք ընդունելու և երբ նա իբրև կակուղ մոմ արտաքին ազդեցութեամբ ստանում է ցանկացած ձևեր: Մեծատան զաւակը հէնց ծնելու օրից ընկնում էր ստնտու ստրկուհու ձեռքը: Ակնիւ Տակիտոսը արդարամիտ և զօրեղ հրապարակախօսութեան (ատենաբանութեան) անկումն վերաբերում է հէնց այս ստրկուհի ստնտուի սկզբնական դաստիարակութեան: Անցաւ այն ժամանակն, ասում է նա, երբ ինքն անարատ և սուրբ մայրը սընուցանում և դաստիարակում էր իւր զաւակին, նախնեաց խիստ կարգապահութեան մէջ, իւր ձեռքերի մէջ և իւր գոգում:

Տակիտոսի ժամանակ մեղկացած ու թուլամորթ Հռովմայեցի կանայք իրանց ստինքով իրանց զաւակը կերակրելու սուրբ պար-

տականութիւնից հրաժարուում էին, այլ այդ պարտականութիւնը յանձնում էին ստրկուհի ստնտուին:

Այն գերդաստաններում, ուր այր և կին բաժան էին ապրում, ստրկուհին բոլորովին փոխարինում էր մօրն և երեխան, ըստ վկայութեան Տակիտոսի, յաճախ դաստիարակուում էր ստրկուհու սենեակում: Ստրկուհին, աւելացնում է Տակիտոս, ջամբում է պարոնները այն կաթն, որով կերակրել էր ստրուկներին, որոնց վերայ ապագայում այդ պարոնը պիտի իշխէր: Նախնի փիլիսոփայ Փաբորինոսը յայտնում է այն միտքը թէ՝ ստրկուհու կաթը ազատածին մանկան մէջ փոփոխութիւն է անում, արմատացնելով նորա մէջ ստոր բնազդումներ: Այս միտքն ճշմարիտ կարող է լինել այն վերաբերութեամբ, որ ստրկուհու կաթը սակաւ սննդարար էր, որովհետև մեծատունք վատ և ժլատութեամբ կերակրում էին իրանց ստրուկներին, բայց տարակոյս չկայ, որ տպաւորութիւն ընդունող մանկան վերայ աւելի ազդում էր ստրուկների անբարոյականութիւնը: «Այս ազդեցութիւնն, ըստ անութեան սուրբ Հերոնիմոսի, ըստ մեծի մասին շատ ողբալի հետևանքներ ունէր. ստրկուհի ստնտուներն, ապականուած ստրկութեամբ, դայեակներն, որոնք օրօրում էին երեխային, տակաւ առ տակաւ ապականում էին փորքրիկ աղջկանց և տղայոց, որոնք և յարաբերուն հասակի հասած ժամանակ էլ չէին կարողանում ազատուել նոցա մնասակար ազդեցութիւնից»: Չորրորդ դարի մի օրէնք սարսափելի մահուան պատիժ է նշանակում այն ստնտուի համար, որ իւր խորհուրդներով կօգնէ մի ցոփագնաց և լկտի երիտասարդի նորա սանուհին փախցնելու. նորա բերանն ածում էին հալած արճիճ: Պատժի տմարդութիւնն ու խստութիւնը ցոյց են տալիս, որ հին աշխարհում նման օրինակ դէպքեր շատ յաճախ էին պատահում: Ի պատիւ մարդկութեան պէտք է խոստովանել, որ եղել են դէպքեր, երբ ստրկուհի ստնտուները ցոյց են տուած ամենաքնքոյշ և անձնազոհ հաւատարմութիւն իրանց սանիկներին: Երբ Ներոն, մարդասպանների հալածանքից փախչելով, վերջ տուեց իւր կեանքին անձնասպանութեամբ, նորա երկու պառաւ ստնտուներն Էկլոգաս և Աղեքսանդրա, որոնք ապրում էին պալատում նորա վերջին սի-

բուհու Ակդէի հետ, տարան նորա մարմինը թաղման խարոյկի վերայ։ Երբ Դոմիտիանոս սպանուեցաւ, նորա Ֆիլիս ստնտուն նորա մարմինն այրեց իւր այգիում արուարձանում և յետոյ գաղտագողի անօթը նորա աճիւնով տարաւ դրեց Ֆլաւիոսների դամբարանում, ուր և իւառնեց նորա փոշին Տիտոսի աղջկայ Յուլիայի փոշու հետ, որին նա սիրում էր և նորա համշիրակ քոյրն էր։

Մեծատուն դերդաստաններում ստնտուի հետ պաշտօնական դիրք ունէր և մի այլ ստրուկ դաստիարակի կամ մանկավարժի կոչումով, այս դայեակն, ըստ վկայութեան Տակիտոսի, ընտրուում էր սուանց նախապէս զգուշութեան և ուշադրութեան։ Յաճախ սա լինում էր մի ստրուկ, որ չունէր ընդունակութիւն ոչ մտաւոր և ոչ մարմնաւոր աշխատանքի համար. որովհետև սովորաբար ծնողներն, ըստ Պլուտարքոսի, մի քանի դէպքերի համար պահում էին իմաստուն և արդարամիտ ստրուկներին և սովորաբար այդպիսեաց յանձնում էին իրանց դրամական գործերն և կամ իրանց կալուածոց կառավարութիւնն, իսկ դաստիարակների համար այդպիսի յատկութիւնք անհրաժեշտ չէին համարում, կարծես թէ հարկաւորութիւն չկար հոգալու երիտասարդ հարստի մտաւոր զարգացման և բարի բարոյական ուղղութեան վերայ։ Սուետոնիոսը պատմում է, որ Ներոնի դաստիարակներն, երբ նա ապրում էր իւր մօրաքրոջ Լեպիդէի մօտ, էին երկու ստրուկներ, որոնց մէկը պարող դերասան էր և միւսը վարսավիրայ։ Հասկանալի է թէ ինչու Սենեքայի դասերն, որ նա ուշ սկսաւ տալ նրան, ազդեցութիւն չգործեցին այս կայսեր վերայ, որ արդէն մանկութիւնից ապականուած էր։

Իմաստուն Հռովմայեցիք, գորօրինակ Կատոնն, այլապէս էին նայում գործի վերայ։ Նա հրամայում էր իւր կնոջ իւր զաւակների հետ կերակրել իւր կաթով և ստրուկների զաւակներին, որպէս զի վերջիններիը եղբայրական զգացմունք տածեն դէպի իրանց տիրոջ զաւակները։ Բայց նա չէր ցանկանում իւր զաւակների դաստիարակութիւնը յանձնել ստրուկ դաստիարակին, թէև սա էր յայտնի ճշմարտասէր և ուսեալ անձն։ Հին Հռովմայեցին պարզապէս տեսնում էր ստրուկների օգնութեամբ կատարուող դաստիարակութեան թերութիւնները. բայց հազիւ թէ ստրուկ դաստիա-

բակներից մէկը հասկանալիս լինէր իւր անընդունակութիւնը դաստիրակ լինելու համար. նոցանից ոչ ոք չունէր այնքան համարձակութիւն, որ ասէր այնպէս, ինչպէս որ Դիոգէնեսն, որ լինելով ստրուկ իւր տիրոջ դոյնպիսի (դաստիարակ լինելու) առաջարկութեան պատասխանեց. «դարձիր դէպի ագատ մարդիկը»: Դաստիարակի դրութիւնը տան մէջ շատ վշտալի էր, նա ակամայ իւր սանիկի բոլոր վատ հակամիտութեանց բաւարարութիւն պիտի տար և ուշադրութիւն չդարձնէր նորա թերութեանց վերայ: Վալերիոս Մաքսիմոսը պատմում է, որ յաճախ դաստիարակներն իրանց հրկոդութեան յանձնուած երիտասարդների և սոցա սիրուհեաց կամ սիրականների մէջ միջնորդի դէր էին կատարում:

Տերենտիոս և Պլաւտոս լատին մատենագիրների երկասիրութեանց մէջ մենք գտնում ենք կենդանի բնորոշ նկարագիրն այն դեպի խաբերայ դաստիարակների, որոնք շատ նման են շնորհագիւտ սպասաւորներին և ֆրանսիական կատակերգութեանց ծառաներին:

Պլաւտոսի «Վաճառական» երկասիրութեան մէջ մի երիտասարդ մեծատուն գնում է ճանապարհորդելու իւր դաստիարակի հսկողութեամբ. բայց վերակացուն ծածկում է իւր երիտասարդ տիրոջ յանցանքները, մանակից է լինում նորա բոլոր անվայել արկածներին և խաբում է հօրը, ծերունու բոլոր կասկածները ջրելով: Պանիպոլոս դրուագքի մէջ ծերունի հայրն թախծութեամբ ապաստակում է. «Ո՞վ ապականեց, վնասացրեց իմ որդուս»: Այս չարագործը — Պսեվդոլոսը — նորա դայեակը, նորա դաստիարակը: Բայց հապա թէ ծերունի Սիմոն իրաւունք ունենար այդպէս գանգատելու Պսեվդոլոսի վերայ: Միթէ նրան յայտնի չէր, որ հերիք էր նորա որդու մի գանգատը Պսեվդոլոսի վերայ, որ վերջինս ընկնէր բանտը, հաց ու ջուր միայն ստանալով:

Պլաւտոսի Բաքքիդայի մէջ կարդում ենք հետևեալ մանրավէպը. Մի եօթնամեայ մանուկ յանձնուած է ստրուկ դաստիարակի, բայց հէնց որ դաստիարակը մի նկատողութիւն է անում, մանուկն այնպէս գայրանում է, որ դաստիարակի գլուխը պատռում է աղիսակով, դաստիարակը գնում է հօր մօտ գանգատելու. բայց հայրն ասում է իւր որդուն. «շատ լաւ ես արել, իմ սիրելի որդի. տես-

նում եմ, որ դու արժանաւոր և ճիշդ ժառանգ ես իմ յատկութեանցս, դու գիտես քեզ անարդարութիւններից պաշտպանել»: Ապա Հայրը յանդիմանում է մանկավարժին. «իսկ դու, անպիտան ծերուկ, չհամարձակիս պատժելու այս համարձակ քաջին»:

Ի՞նչպիսի վարկ կարող էր ունենալ յանդուգն քաջի աչքում խեղճ ծերուկն, որի հետ այդպէս վարուեցաւ Հայրը: Ապա Բաքքիդայի մէջ մենք կարդում ենք հետևեալ գեղեցիկ տեսարանն, որ մենք չենք կարող այստեղ առաջ չբերել: Ծերունի մանկավարժ Լիդոսն աշխատում է կրթել, խելքի բերել իւր սան Պիստոկլէրին: Լէր. «Դու կորած ես, դու ինձ էլ մահացրիր: Դու մոռացար այն բարի դասերն, որոնք ես քեզ տալիս էի: Պիստ. «իրաւ այդպէս է. ես ի զուր կորցրի իմ աշխատանքներն և դու քոնը, դաստիարակութիւնն, որ ինձ տուիր, ոչ իմ օգտին ծառայեց և ոչ քո օգտին: Լէր. Քո սիրտդ յափշտակուած է. Պիստ. Դու ինձ բոլորովին ձանձրացրիր. Լռիր, Լիդ, և էկ իմ ետևից: Լէր. Այդպէս. Դու ինձ այլ ևս չես անուանում «չմ ա-ա-ցին». այլ լոկ Լիդոս. Դու սիրուհի՞ ունիս: Պիստ. Երթանք ես նրան քեզ ցոյց տամ: Լէր. Ո՛չ, ես չեմ կարող համբերել և կերթամ բոլորը կպատմեմ Հօրդ: Պիստ. «Այդ մի անիլ, Լիդոս, զգուշացիր: Լէր. Ինչո՞ւ պիտի վախենամ քեզնից: Պիստ. Ցիշիր որ ես այն հասակումն եմ, որ ինձ անվայել է հոգաբարձութեան ներքոյ գտնուիլ: Լէր. Ո՞ր անդունդն ընկնիմ. Ես տեսնում եմ այն, ինչ որ բնաւ տեսնել չէի կամենալ. ինձ լաւ է մեռնիլ: Աշակերտը սպառնում է իւր ուսուցչին. Ես անպատկառ և լպիրշ աշակերտներ ունիմ, նոքա ինձ կսպանեն. Անզօր թշուառ մարդ եմ. Պիստ. Լաւ. ես Հերակլէսին կձևացնեմ. և քեզ հետ կվարուեմ իբրև Լինոսի հետ: Լէր. Ի՞նչ, աւելի լաւ է, ես Փիւնիքս կդառնամ:

Ես կերթամ և կասեմ Հօրդ, դուք այլ ևս որդի չունիք: Պիստ. Հերիք է, ցնդաբանել: Լէր. Դու ամօթդ կորցրել ես: Որպիսի ողորմելի գիւտ է, որ դու ձեռք ես բերել անամօթութիւն: Դու կորած մարդ ես: Մի՞թէ դու մոռացել ես, որ Հայր ունիս: Պիստ. Մի՞թէ դու մոռացել ես, որ դու ստրուկ ես»: Կենդանութեամբ և արդարութեամբ լի այս պատկերը մարդուս ակամայ դառն մտածո-

մանց մէջ է ընկղմում։ Ստրկատիրոջ վերջին խօսքերն ամէն ինչ պարզում են — դաստիարակը, իւր բոլոր ազնուութեամբ, իւր բոլոր բարի դիտաւորութեամբք, անգօր գտանուում է արդիւնաւոր ազդեցութիւն գործելու իւր աշակերտի վերայ. այո՛, այս վերջինս իւր հօր ստրուկների մէջ միշտ կգտնէ նորա հաճոյքին ծառայող անառակներ։ Միւս կողմից այս տեսարանն ապացուցանում է մեզ, որ և ստրուկների մէջ կային բարձր հոգիք, որոնց մէջ ստրկութիւնը չէր կարողացել խեղդել ազնիւ զգացմունքներն և ձգտումները։ Հռովմէական գերեզմանատանը մի դաստիարակի գերեզմանաքարի վերայ թողած է այս արձանագրութիւնը. «Ես բարեպաշտ էի և անարատ. Ես ապրեցայ այնքան երկար, որքան հնար էր. Ես ոչ դատուեցայ մէկի հետ, ոչ վէճ, ոչ գանգատ և ոչ պարտք ունեցայ, Ես միշտ հաւատարիմ էի բարեկամացս. Ես ստանում էի փոքրիկ ռոճիկ, բայց դորա փոխարէն հոգիս մեծ էր»։ Որքան էլ զարմանալի լինի մեզ համար այս արձանագրութեան պարզամտութիւնը, չէ կարելի չխոստովանել, որ դաստիարակների մէջ եղած են և արդարու ազնիւ անձինք։ Դուցէ մեռած դաստիարակն արձակեալ ստրուկներից էր նման Թեմիստոկլեսի Պալեմոնին, որոյ մասին Սուետոնիոսը խօսում է երևելի քերականների կենսագրութեանց մէջ։ Պալեմոն, որ յետոյ երևելի Հռովմայեցի դաստիարակ եղաւ, որին Տիբերիոս և Կլաւդիոս կայսրների հրովարտակներով յանձնուեցաւ երիտասարդների դաստիարակութիւնը, սկզբում ստրուկ ոստայնանկ էր, յետոյ նշանակուեցաւ դայեակ։ Պալեմոնը իւր երիտասարդ տիրոջ ուսումնարան տանելով, գիր սովորեց և այնքան գիտութիւն շտեմարանեց, որ ազատութիւն ձեռք բերելից յետո Հռովմում դպրոց բաց արաւ։

Շարունակենք մեր հետազօտութիւնը։ Ահա Ի էրիտասարդ մարդն այդպիսի գաղափարներով, քայլ առաջ. ապրիլ-Ընդեռ կենդանի, որ նորա վերայ դրել են դայեակն ու ուսուցիչը նախապէս ճանչել է անխախտելի, ըստ ասութեան Սենեքայի։ Նա երես առած և ազատանած է, երիտասարդ ստրուկների նորա կամքը պաշտելով, որոնք նորա հետ միասին դաստիարակուում էին և որոնք դուցէ իրանց ստորաքարշ և անաբարոյական ծառայութիւններով, դուցէ և ազատութիւն ձեռք

բերած են։ Այժմ նա նոցա տէրն է։ Քսան տարեկան հասակում այս մարդն ապականութեան և գեղխութեան բոլոր սերմերն իւր մէջն ունի, մբրկալից արիւնը եռում է նորա ջիղերում, երևակայութիւնը անսանձ նժոյգի նման քարշում է նրան դէպի ամենահնարաւոր բաւականութիւններ։

Որպէսի տարբերութիւն է այս անհաւատ հեթանոսի, որ ծնողներից ժառանգած է հռովմէական քաղաքակրթութեան բոլոր ապականութիւնն և իւր դաստիարակութեամբ ստացել է կատարեալ արհամարհանք դէպի ինքն ու իրան շրջապատողներն և մի քրիստոնէի մէջ, որ դաստիարակուած է արդար և բարի ընտանիքում, որ ներշնչել է նորա մէջ արիութիւն դիմադրելու զգայականութեան բոլոր հրապոյրներին, որ սովորցրել է նրան զգուշութեամբ և արթնութեամբ նայելու կեանքի վերայ և այս անցաւոր կեանքի մէջ մի նոր ինչ տեսնելու, որ և կազմում է մարդկային գոյութեան իսկական նպատակը։ Նա նայում է բոլոր աշխարհի և կեանքի վերայ, իբրև Աստուծոյ նախախնամութեան յայտնութեան վերայ, նորա երազներն, ինչպէս և երևակայութիւնը, սուրբ են, նորա ցնորքները, եթէ միայն ունի, ուղղած են դէպի այն ընկերուհին, որին Աստուած նշանակել է նրան ամուսին։

Հեթանոսն այս հաւատն ապագայի մասին չէր կարող ունենալ, կրօնը չէր գսպում նորա զգայականութիւնը, այլ ընդհակառակը քաջալերում և նպաստում էր նորա զարգանալուն, հարուստի համար ամեն ինչ հնարաւոր էր և ներելի, ստրուկներն և ստրկուհիք պէտք չէ անվայել համարէին այն, ինչ որ նոցա տէրերի համար վայելուչ էր։ Խառնակեցիկ կեանքն ու ցոփութիւնն, որ ասում է Սենեքան, յանցանք էր ապատ ծնածի համար, անհրաժեշտ էր ստրկուհու և պարտականութիւն էր արձակեալ ստրկի համար։ Ուստի և հասկանալի է, որ ամենանուրբ, ամենանամօթ և անասնական գեղխութիւնն էր տիրապետում հարուստների ոսկեզօծ պալատներում։ Ահա ինչու հասարակապետութեան վերջին ժամանակում և կայսրութեան սկզբում ամուսնական կապերն իրանց նախկին ամրութիւնը կորցրին։

Ապահարգանը սովորական դարձաւ։ Ամուսնական կապերը յան-

կարծ լուծուում էին և կրկին միանում դրամական շահերի կամ լոկ հաճոյից համաձայն: Ինչպէս ասում է Կղեմէս Աղեքսանդրացին, «ստրկութիւնը բոլորովին խայտառակեց պսակի սուրբ պատկերը»: Եւ յիրաւի ի՞նչ էր հարուստի կնոջ վիճակը մեծատան պալատում, որ լի էր ստրկուհիներով: Ստորացած անարժան ախոյեաններից և իւր ամուսնուց յաչս ստրկաց, նա՝ կինն իւր ամուսնութեան օրից կամաց կամաց կորցնում էր իւր նշանակութիւնը տան մէջ, նորա ցնորքները յօդս ցնդում էին, սէրը ծաղրի առարկայ դառնում և ահա տակաւ առ տակաւ նա հետևող էր դառնում իւր մարդու անառակութեան և աստիճանաբար իջնում էր ի շարս այն անառակ տիկինների, որոնց Եուվենալը նկարագրում է իւր «Ն՚-ն սարսափելի վիպասանութեան մէջ: Վալիրիոս Մաքսիմոսը գովաբանում է Սկիպիոն Ափրիկեանի կնոջ նորա համար, որ այս ազնիւ տիկինը կեղծում էր, որ իբրև թէ չէ նկատում Ափրիկէի նուաճողի թուլութիւնը դէպի իւր ստրկուհիներից մէկն և նորա մահից յետ ոչ միայն ազատութիւն տուեց այս աղջկանն, այլ և վայելուչ կերպով ամուսնացրեց: Բայց ո՞վ գիտէ, որքան ծանր նստեցաւ զուցէ այս որոշումն ազնիւ տիկնոջը: Կարծես Պլաւտոս աւելի ուղիղ հայեացք գցել էր գործի վերայ և իւր «Կազինա» կատակերգութեան մէջ թողած է մեզ մեծատան կնոջ խղճալի ստորացուցման կենդանի պատկերը: Հանդիսումն են ընկերուհիք հռովմայեցի տիկնայք Կլէոպատրա և Մուրրինա, նոքա բարեկամական խօսակցութիւն են անում, որոյ մէջ առաջինը խոստովանում է, որ իւր ամուսինն առանձին ուշադրութիւն դարձնում է նորա սանուհու, մատաղահաս ստրկուհու վերայ և կամենում է նրան ամուսնացնել կառավարչի հետ նորա համար, որ իրան սիրուհի անէ: «Լռի՛ր աղաչում եմ, լռի՛ր» ասում է Մուրրինան: — Վախենալու ի՞նչ կայ, մենք բոլորովին միայնակ ենք», պատասխանում է ընկերուհին: «Դու ի՞նչ իրաւունք ունիս այդ ստրկուհու վերայ», կրկնում է Մուրրինան, օրինաւոր կինն ոչ մի սեպհականութիւն չպիտի ունենայ առանց ամուսնու կամաց: Ամեն ինչ, որ քոնն է, նրան է պատկանում: — «Ահա դու էլ իմ դէմ ես», պատասխանում է այս խօսքերին վշտացած Կլէոպատրան: «Լռի՛ր, դու ան-

մի՛տ, կրկնում է Մուրրինան, լսի՛ր ինձ, ոչ մի դեպքում նորա հետ վեճ մի՛ բանալ: Թող ում կուզէ սիրէ, թող նա յափշտակուի իւր հաճոյքից, միայն որ տանը դու չտանջուիս»: Չէ կարելի չխոստովանիլ, որ այս խորհուրդներից, թէև մի փոքր կատակերգական են, բուրում է սառնութեան և քարասրտութեան հոտ, որ անշուշտ ներքին վիշտերի հետևանք է: Բայց այսպիսի ծածուկ բնաւորութիւն ունենալու ընդունակ են միայն համեստ և չափաւոր անձնաւորութիւնք, իսկ որքան կագ և վեճ, խայտառակութիւնք և չարագործութիւնք կատարուում էին խաբուած սիրոյ առթիւ և որ աւելի սարսափելին է, այս եղերերգութիւնք տեղի էին ունենում ստրուկների աչքի առաջ և մեծ մասամբ նոցա գործակցութեամբ և մասնակցութեամբ: «Այս կաք ու վեճերն, ասում է Ս. Յովհաննէս Ոսկեբերանը, զուարճութիւն էին ծառաների համար, որոնց բնական ատելութիւնը մխիթարուում և սփոփուում էր իրանց տէրերի կռիւներով. այն կռիւները գօրացնում էին ծառաների կամայականութիւնն և ինքը կռիւն էլ գօրանում էր նոցա զրպարտութիւններով»:

Երբեմն այս ընտանեկան զեղխութիւնը, ստրկութեան պտուղը, հասնում էր զզուելի մանրամասնութեանց: Մի մատաղ ստրկուհի դուր եկաւ միևնոյն ժամանակ գերդասանի հօր և սորա որդուն, երկուսն էլ աշխատում են ծածկելու իրանց անառակութիւնն օրինական պատճառաբանութիւններով. հայրը կամենում է ամուսնացնել նրան իւր կառավարչի հետ, իսկ որդին իւր կառապանի հետ: Թշուառ մայրը, կամենալով ընտանեկան խաղաղութիւնը պահպանել, ստիպուած էր հաղորդ լինել որդու անառակութեան և երբ հայրը որդուն տնից հեռացնում է, նա՝ մայրը նորա բացակայութեան ժամանակ հսկում և պահպանում էր նորա արատաւոր շահերը: Այսպիսի էր կնոջ բարոյական ստորացումն հին աշխարհում: Նոյն հեղինակն իւր «Բան ընթա-ոչ» կատակերգութեան մէջ նկարագրում է բարձր-բարոյական ամուսնական սէրն և նկարագրում է սրան այնպիսի գծերով, որոնց կարող էր նախանձել Ֆեն Շեկսպիրը:

(Շարունակելի) (Թարգմ. Ս.)

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ

ԽԸ.

(Շարունակութիւն).

—

Զո՛ Նորավանդէց. Փայտ — դարայ. Կնիշկի գիւղը. Դալիքաղ. Ենգիջայ գիւղը. Կողո՛ դարայ. Կո՛ղպակ-լաղ կամ Մո՛ղրիկ գիւղը և Եկեղեցին. Վարդաբերը՛ ա՛ղբակը. Զէյնայ գիւղը. Աղապակ գիւղը. Նորա Եկեղեցին և գոնա՛ճ երեղէնները. Սո՛ր Մարինոսի ժապա՛ռը. Աղո՛ղները և քաղաքայ պարսահանդէս. Լէյլի և Մաջնո՛ մասպղերը. Լէբէլ. Փոգիւ՛ը:

«Մնաս բարեաւ Ամաղու, մնաս բարեաւ Նորավանք, մնաս բարեաւ դամբարան՝ բարձր տոհմին Օրբելեան» հառաչանքով արտասանեցի ես և երեսս դարձրի: Իջայ առուակի ձորը, անցայ Ամաղու գիւղը, հասայ սուրբ Յովհաննէսի աղբիւրին: Ախ՝ սառնորակ աղբիւր, բիւրեղանման աղբիւր, վերջին անգամ զովացրու հոգիս, այլ ևս քեզ տեսնելու չեմ . . . : Այդ պատուական աղբիւրի ջուրը խմելով՝ ես իսկոյն թեքուեցի դէպի արևելք, ուր Խաչիկու, Ղուլուն օյնաղի և Գեալին - դայի լեռնագօտու հիւսիսային լանջերը աստիճանաբար իջնում են դէպի Ամաղուի ձորը: Ահա՛ այդ լանջով, լեռնային նեղ ճանապարհով, խորթ ու փորթերի միջով գնում եմ դէպի արևելք, դէպի Կնիշիկ գիւղը: Հասայ այն ժայռի գլուխն, որ անմիջապէս նայում է հարաւից Նորավանքի վերայ և ուր երևում են նախկին Տխարբ և այժմ հին Ամաղու անունով գեղի աւերակները:

Առանց կանգ առնելու շարունակեցի ճանապարհս և նեղ կածանով իջայ մի խոտաւէտ ձոր — Փայտ դարայ կամ Մառքաայ ի-ղրէ: Աւանդութիւնը պնդում է որ Նորավանքի միաբանութիւնն այդ ձորում ունէր վանքապատկան գոմեր (փայայ — գոմ, դարա — ձոր) և վարդապետների համար՝ ամարանոց. (մահրասայ — վարդապետ և իւրդի — ամարանոց, նստուածք:)

Փայադարայ ձորը, Նորավանքից ոչ հեռու, Կնիշիկի գետակի ափից՝ աստիճանաբար Հիւսիսից Հարաւ բարձրանում է մինչև Դեալին-Ղայայ լեռնադադաթն և Խաչիկու գլուխը: Նորա միջից հոսում է սառնորակ աղբիւրներից կազմուած մի առուակ, իբրև օժանդակ ճիւղ Կնիշիկի գետակի:

Մինչև վերջին տարիները Փայադարան պատկանում էր պետական գանձարանին և համարւում էր Արփայեցոց ամարային արօտատեղին: Որպէս զի կարողանայ խլել Արփայեցիներից՝ Կնիշիկ գիւղի հասարակութիւնը ջանաց սեփականացնել Նորան մուլքադարական իրաւամբ Զուացի Հասան Ալի սուլթանին, որին պատկանում է նոյնպէս և Կնիշիկը:

Փայադարից միւս բարձրութեան վերայ Հասած՝ արդէն լերան ստորոտում, բաժակաձև Հովտի մէջ՝ գետակի մօտ տեսնում էք սփռուած Կնիշիկ Հայաբնակ գիւղն իւր շրջապատ ուռենիներով, առուոյտներով, հին ցրուած գերեզմաններով: Բնակիչներն երեսուն տուն 142 արականով և 123 իգականով, Դարալագեազի բնիկներից են, որոնք Ռուսաց տիրապետութիւնից յետոյ Խաչիկից, Արփայից եկել շէնացրել են հին աւերակները:

Կնիշիկ ԺԲ և ԺԳ դարերում յայտնի էր և իբրև «Գինէշիկաձոր» յիշւում է Սմբատ իշխանի արձանագրութեան մէջ, Նորավանքի ժամատան արևմտեան դրան գօտու վերայ, լուսամտի ներքև: Գիւղի շուրջը սփռուած ՅՌՆՔ գերեզմանատները կենդանի ապացոյց են երբեմն բազմամարդ լինելուն: Սակայն՝ բացի գերեզմաններից՝ ուրիշ աւերակների հետքեր չեն երևում: Գերեզմանաքարերի արձանագրութիւնները սկսւում են 1344 թուից մինչև 1691 թիւը: Նորանց վերայ երևում են քանդակաւոր նկարներ, զորօրինակ՝ երկու ձիաւոր նիզակահարում են երկու օձանման վիշապների: Տապանաքարերն ունին խաչարձանի, ձիու և խոյի ձևեր:

Նորագոյն գերեզմանաքարերի մէջ կայ մինը, որ կրում է 1868 թուականից հետևեալ չափաբերականը.

«Այս է դամբարան,
«Մարմնոյ բնակարան.
«Խղճալի Յարութեան,
«Ազգաւ Օհանեան:»

Գիւղը թէպէտ ջրառատ հովտի մէջ է, բայց զուրկ է ծառերից: Ժողովուրդը ուշ չի դարձնում այդ բանի վերայ, մի քանի տասնեակ ուռիներ հապիւ կան տնկած այս և այն տեղ, այն ինչ կարելի էր մրգաբեր ծառերի շարքեր տարածել ամբողջ ձորի մէջ: Ժողովուրդը զբաղուած է հողագործութեամբ, անասնապահութեամբ և մասամբ մեղուաբուծութեամբ: Կնիշիկի սպիտակ քաղցրահամ մեղրը գովելի է ամբողջ Դարալագեազում:

Երկու, երեք վերստ գիւղից դէպ հիւսիս, մի բարձր հարթավայր յանկարծուստ թեքւում է ալեծածան երկայնաձիգ ձորակներով դէպի Արփաչայի հոսանքն և այդ տեղից բացւում է սքանչելի տեսարան. ձեր աչքի առաջն են իսոր ձորի մէջ հեռու Արփաչայը, Մալիշկայ, Գեշիշքեանդ, Օրթաքեանդ և այլ դրացի գիւղեր, այլ ևս հեռու՝ Սուրբ խաչ վանքը, Դալիք Թափայ, Ալագեազի ձորը, Թաքեադոնդուրանի գագաթն և այլն:

Մեր կանգնած տեղը, ճանապարհի վերայ, կայ քարից և փայտից շինած հասարակ մատուռ և որի «Դալի (խելագար) խաչ» կոչումն արգելք չէ տեղացի հայերին ուխտ անել նորան և մատաղ մորթել: Մատրան մէջ ցանուցիր թափուած են սևացած մրոտած ճրագներ, մոմի կտորներ, խնկի և ածուխի փշրանքներ և այլն:

Աւանդութիւն կայ որ դեռ Նապիր Շահի ժամանակ այստեղ կային ներկայ մատրան խաչքարերը և շինութեան հիմնապատերը: Ոմն Ֆահրատ անուն խելագար տաճիկ մի քանի անգամ կացնով զարկել է խաչքարին և ասել «Ֆահրադ դալի, խաչ դալի» որից և ծագել է Դալի խաչ անունը: Այս 1853—55 թուին, Այար գիւղի Մկրտիչ քահանայ Մարտիրոսեանցը՝ տեսնելով որ մորեխն անխնայ ոչնչացնում է Դարալագեազի արտերը, ինքը, ծնկաչոգ, մօտակայ Ենգիջայ գիւղից մէկ վերստ տարածութեամբ բարձրացել է մինչև Դալի խաչ և աղօթել է: Դորանից մորեխը դարձել է այլ կողմի վերայ և քահանան շինում է մատրան ներկայ շինութիւնը:

Դալի խաչից մի վերստաչափ ներքև, լերան լանջին կպած փոքրիկ հայաբնակ գիւղն Ենգիջան է՝ 25 տնով, 140 արական և 113 իգական բնակիչներով: Ներկայ բնակիչները գաղթած են Պարսկաստանից, բայց գիւղն յայտնի էր հին ժամանակում: Օրբելեանի գիւղо-

րէից ցուցակի մէջ յիշած «Գնջին» գիւղը հաւանականաբար այժմեան Ենգիջան պէտք է լինի: Նորավանքի մասին գրած Բուբաք իշխանի արձանագրութեան մէջ, 1223 թուականին, նուիրած հողաբաժնի մի սահմանն որոշւում է Գնջին գիւղով և այլն: Մերկ, ողորմելի Ենգիջան զուրկ է մինչև անգամ սովորական ուռի ծառերից:

Գիւղից փոքր ինչ ցած սկսւում է մի ծառապարդ ձոր Կողը-դաշ անունով, ուր կան ընկուզենի ծառեր, որից և կոզ, կոզլու (ընկոյզ) դարայ — ձոր կոչումը: Այդ տեղ կան և երեք-չորս կրախառն պաղ հանքային, բաւականաչափ առատ ջրեր, որից բնակիչներն օգտւում են բորոտութեան դէմ: Մենք չենք գնալ այդ ձորով դէպի մեզ վաղուց արդէն ծանօթ Այար գիւղն՝ Արփաչայի ափին, այլ յառաջ կերթանք արևելեան ուղղութեամբ:

Զորս—հինգ վերստաչափ անցած իջնում ենք ձորը, անցնում ենք նորա փոքրիկ առուակն և բարձրանալով հանդիպակաց լերան կուրծքի վերայ՝ կմտնենք հայկական աւերակների վերայ հաստատուած Կուրտ-կուլաղ (գայլի ականջ) թրքաբնակ գիւղն 336 բնակիչներով: Արևելեան եկրում երկու քարէ մեծ աւազանների մէջ երկու խողովակով թափւում է քաղցրահամ աղբիւրի առատ ջուրը: Այդ տեղ գետնի մէջ կան երկարաշար խողովակներ: Ի՛նչ կասկած որ աղբիւրն իւր շինութիւններով մնացել է նախկին հայ բնակիչներից:

Գիւղամիջում կանգնած առանց առաստաղի փոքրիկ եկեղեցին կառուցած է կապտագոյն սրբատաշ քարից, որի հանքն արևելակողմի բարձր սարի վերայ է: Սեղանի կամարի վերայ ձգուող կիսով չափ փտած գերանը ցոյց է տալի թէ եկեղեցին հին չէ: Միայն հարաւային դրան արևմտեան կողմի սեան վերայ, արտաքուստ, ամենափոքր և անճոռնի տառերով գծած է «Թվ. ՌՃՁԵ. (1185): Հիւսիսային խորանի դրան վերը՝ պատի մէջ հագուցած խաչքարն ունի նոյնպէս անճոռնի տառերով գրած արձանագրութիւն, որից կարելի է կարդալ միայն Թիւն ՌՃԳ. (1103):

Սեղանի հիւսիսային սեան կարմիր քարի վերայ փորագրած է «Յիսուսի Քրիստոսի հրամանաւ մեք Ծուկրուկոյ ջամահաթս կանգաց-

բինք Թուխ-մանուկ եկեղեցիս յիշատակ հոգոց մերոց:» Թիւ չկայ: Ուրեմն սոյն կցկտուր արձանագրութիւնները բացատրում են մեզ, որ Կուրտկուլաղը, 1654 թուականից առաջ և յետոյ եղել է հայաբնակ, կոչուել է Մուկրիկ, որի հասարակութիւնը կամ ըստ արձանագրութեան ջամահաթը՝ շինել է փոքրիկ եկեղեցին: Ձնայելով որ ինձ ճանաչում էին այդ գիւղում, այնուամենայնիւ իմ երևիլը ժողովեց շուրջս հետաքրքիր բազմութիւն: Եկեղեցու հարաւային փոքրիկ քանդուած լցուած դռնով երբ կուզէկուզ մտայ ներս, այդ միջոցին գիւղի տանուտէր Թուրքը հանդարտութեամբ խոտ էր դարսում եկեղեցու մէջ իբրև ձմերային պաշար . . . :

Տեղական հայերն այժմ էս գ"րծ են ածում երբեմն Մուկրիկ, երբեմն Կուրտկուլաղ: Վերջին կոչումը ծագում է, ասում են, գիւղի գլխին բարձրացող սրածայր բլուրի մի գոյդ ցից քարաժայռերից, ականջների նմանութեամբ:

Կուրտկուլաղից հարաւ և նրանից ոչ հեռի, բլուրի արևմտեան լանջում, երևում է ահա բաւականին ընդարձակ գիւղատեղի, իւր տների քարէ աւերակներով: Հիւսիսակողմում կրաշաղախ, կապոյտ քարէ, քանդուած եկեղեցին ունի 18 քայլ երկարութիւն և 10 քայլ լայնութիւն: Ունի նոյնպէս երկու աւանդատուն, մի աւազան հիւսիսային պատում, չորս սիւն քառանկիւնի ձևով և դորանց կապող՝ դեռ ևս ամբողջ, կամարներով: Եկեղեցու և բեմի առաստաղն արդէն խոնարհուած են: Պատերի մէջ անկանոն, աջ և ձախ դրած են խաչքարեր: Միակ հարաւային դուռն այնքան է ծածկուած՝ որ մտնողին կուացնում է: Արձանագրութիւն չկայ, միայն աւազանի վերևը խաչքարի վերայ գրած է «խաչս յիշատակ է Խարոնին Թվ. ՌՃՁԹ (1189)»: Սոյն թուականն երևում է և եկեղեցու շուրջը ցրուած տապանաքարերից մինի վերայ:

Յիշեալ հայկական թուականը ցոյց է տալի որ 1740 թուին շինած է այդ եկեղեցին և հետևաբար կար այդ տեղ հայ բնակութիւն, որի աւերումն ոչ ոք բնիկներից չէ յիշում: Դարալագեազի բնիկ հայերը — Կնիշիկ, Խաչիկ, Առփայ և այլն — այս աւերակ գիւղն անուանում են «Վարդաբլուր»: Նոքա պատմում են իբրև աւանդութիւն, թէ եզան արջառը Մուկրիկից փախել է և բարձ-

բացել է Վարդաբլուրի եկեղեցու սեղանը: Տէրը որոնելով գտել է նորան և բարկացած արտասանել է «Ծուկրիկ լծից փախչում ես՝ Վարդաբլուր պատարագ անում»:

Վարդաբլուրից ճանապարհը տանում է աջ՝ դէպի Կորադիզ գիւղը և ձախ՝ դէպի Զէյթայ: Ես ընտրում եմ վերջինս և յառաջ գնալով՝ նայում եմ ծաղկածուալ բարձրութիւնից շուրջս, ուր տեսնում եմ Արփաչայի ոլոր մոլոր աւազանը և նոյն հրաշալի տեղերն, որոնց տեսանք Դալի խաչից: Կուրբանքեասլան թրքաբնակ գիւղում կանգ չառնելով, 3—4 վերստաչափ ուղի կտրած, ես արդէն հանգստանում եմ մի աղքատ, թշուառ և գողերով լիք գիւղում: Այդ Զէյթան է, հայկական աւերակների վերայ գտեղուած:

Եղած է բլրակի վերայ մի եկեղեցի, որի քարերը գործածուել են թուրք բնակիչների մասնաւոր շինութիւնների վերայ և ուրեմն անհետացել է նորա տեղը: Բայց գիւղի շուրջը կան չորս գերեզմանատներ, որոնց միայն մի քանի տապանաքարերը ունին դրութիւն: «Տապանս կանգնեց Թվ. ՌՃԿԲ (1162) Տիրգալի խանին:» Թվ. ՌՃԿԲ (1162) Տէր Օվանէսի եղբոր: «Տիլանի որդի Աւագին Թվ. ՌՃԽԲ (1142): Սորա վերայ ձևացրած է հացկերոյթի պատկեր: Ամենահին արձանագրութիւնը վերաբերում է 1122 թուին:

Ուրեմն 1673—1713 թուից առաջ և յետոյ հայ ժողովուրդն այդ տեղ բնակուել է և յաւիտեան անհետացել: Զէյթան շատ հին յիշատակարաններ չունի, բայց տեղիք է տալի կարծել, որ նա Օրբելեանի գիւղօրէից ցուցակի Զեղեայ գիւղն է:

Զէյթայից արևելք մի քանի մացառոտ ձորերից այն կողմն՝ ահա մեր առաջ դուրս կգայ Ագաղէք կամ Ազատակ հայոց գիւղն իւր շրջապատ մրգատու պարտիզներով և սառնորակ աղբիւրներով: Գիւղացիք գաղթել են Պարսկաստանից 1827—28 թուին և այժմ կազմում են 51 տուն 307 արականով և 252 իգականով: Դիրքը հարթավայր, դէմը հիւսիսից արևելք բաց, գեղեցիկ տեսարան, Նազիւրդի և Խոտիսուի բարձրաբերձ լերանց կանաչագեղ և անտառածածկ ձորակները և կարկաչահոս առուակները: Մի այլ լեռնային երկայնաձիգ բարձրութիւն հարաւից ստուեր և զով է արձա-

կում գիւղի վերայ և բաժանում է Դարալագեազը Նախիջևանի գաւառից: Սոյն բարձրութիւնից ջրերը հոսում են դէպի հիւսիս՝ Արփաչայի աւազանը և դէպի հարաւ արևելք—Շահբուզի (Շահապոնս, և Ջահրի (Ճահուկ) աւազանով դէպի Նախիջևան:

Թէ որքան հին է Ագատակն, այդ չէ երևում ոչ մի յիշատակարանից: Արևմտակողմի գերեզմանատան քարերն անգամ չունին արձանագրութիւն: Գիւղական հասարակ եկեղեցին նորագած է հին պատերի վերայ: Դրան վերը, արտաքուստ, ամբողջ մնացել է հնագոյն հին արձանագրութիւնը: «Կամաւն Աստուծոյ մեք Ագատակայ ժողովուրդս շինեցաք զեկեղեցիս ի Հայրապետութեան Տեառն Յակոբայ:» Թուական չկայ, բայց հաւանական է, որ յիշեալ Հայրապետն լինի Յակոբ Ջուղայեցին և ուրեմն եկեղեցին շինուած լինի 1655 - 1680 թուին, ըստ որում եկեղեցու վերանորոգութեան միջոցին, 1869 թուականին, նորա պարսպատի փակ պատուհանի մէջ գտնուել են պղնձեայ իրեղէններ, նուիրած նոյն եկեղեցուն, այն է երկու քշոց միանման հետևեալ արձանագրութեամբ. «Յիշատակ է Ադայպակի որդի Կիրակոսին ի դուռն Սուրբ Ստեփաննոս. թվ. ՌՃԻԶ (1126): Մի քշոցի և ծնծղայի վերայ՝ «Յիշատակ է Շաղոի որդի Մարտիրոսին, Ագատակ ի սուրբ Ստեփաննոս. թվ. ՌՃԾԱ (1151). իսկ բուրվառի վերայ՝ «Յիշատակ է բուրվառս Շօռութցի Կրիքորի որդի Պետրոսին, որ ետ ի դուռն Ագատակու սուրբ Ստեփաննոս Նախավկային:» Վերոբերեալ թուականները մօտաւորապէս վերաբերում են Յակոբ կաթուղիկոս Ջուղայեցու ժամանակին: Ներկայ Ագատակցիք եկեղեցին, նախ անուանելով սուրբ Սարգիս, իրեղէնները գտնելուց յետոյ յատկացրել են նորա իսկական անունը — սուրբ Ստեփաննոս: Մի վերստաչափ հեռու, գիւղից դէպի հարաւ, ձորամիջի առուակի մօտ, սակաւաթիւ աւերակների և փշատի ծառերի մէջ կայ կանգուն փոքրադիր մատուռ, մի քանի խաչքարերով: Ագատակցիք նախ անուանել են սուրբ Յովհաննէս, բայց յետոյ Ս. Յակոբ, ըստորում գտել են մի արձանագրութիւն «Յանուն ես ապքատ Մելիքշահս շինեցի սուրբ Ակոբ . . . նա հանգիստ Շաքարբէգին թվ. ՌՀԲ (1072)»: Այդ ձորի առաւել հին յիշատակարանն է մի խաչքար կանգուն, ՉԿԲ (772) թուականով:

Առուակից աջ, բարձր բլուրի վերայ երևում է մի այլ աւերակ մատուռ Սուրբ Մարինոս անուամբ, աւերակ ցանկապատի մէջ: Սորա մէջ Ազատակցիք, սուրբ Մարինոսին ապաւինած՝ երկու ամիս պատսպարուել են Շիրին սուլթանի յարձակմունքներից:

Ազատակի ժողովուրդը լաւ յատկութեանց տէր և բարի մարդիկ են, ուրախ տրամադրութեամբ: Նոցա հիւրասիրութիւնը յայտնի է: 1879 թուականի զատկի ուրախ օրերն էին, երբ մի անգամ ես հանդիպեցայ այդ գիւղում, ուր շատերն ինձ կճանաչէին և շատերին ես կճանաչէի: Արանց և կանանց բազմութիւնը խմբուած արևմտեան գերեզմանատան շուրջը, տերևալից ծիրանների տակ, ծաղկախառն կանաչ դաշտի վերայ ուրախութիւն էին անում, խօսում, զբօսնում, զուարճանում էին և աշուղներին լսում: Ուրախութեամբ ընդունեցի նրանց հրաւէրը և միացայ այն խմբին, ուր մասնակցում էին և նուագածու աշուղները:

Աշուղները սարքեցին սակերը, օրհնութիւն հայցեցին մօտս նըստած ծխատէր քահանայ Տէր Սիմէօն Կոստանեանից, նայեցին իրար վերայ և սկսեցին հետևեալ հայերէն երգը:

«Ղօշմա»

Էս օր ես մէ գեօզալ տեսամ,
Ռանգը լալա ի, լալա ի:
Սիրիր եմ, չեմ կարայ թարգել,
Էդ ինչ դարդ ու սար բալա ի:
Շապիկդ բերեմ Շիրվանայ,
Մէջկապդ բերեմ Ֆիրմանայ.
Ֆեզի բերեմ Սպահանայ
Սայադ (դերիա) դարահի, դարահի: (մետաքս)
Արքաւութնի խոտն է քո ծոց,
Սիրտս զարկեց կրակիդ բոց,
Էթամ բերեմ ոսկի երիանոց
Զարկես դօլայի, դօլայի (շուրջ):

Երեսիդ խալերն է խատ խատ.
Ես քէ ղոհում (բարեկամ) տիւ ինձի եադ (օտար).
Խոյլու Ֆեաքիւլն եմ բէ յմուրադ,
Սիրտս եարայ ի, եարայ ի:

Ամեն կողմից ծափահարեցին և գոհութեան ցոյցեր արին աշուղներին, որոնք միքանի բոպէից յետոյ սկսեցին մի այլ երգ նոյն հեղինակի:

Ղօշմա

Քրիստոնեայ էք, եկէք, անկաճ արեցէք,
Տեսէք, աշխարհումս քանի՞ բան մնաց.
Հայրապետներն եկան, օրէնք կապեցին,
Նրանցից եկեղեցին մեզ նշան մնաց:
Զօրաւոր ես, Տէր Աստուած, տիւն զօրաւոր,
Գալացուոր ես էս աշխարհս եկարուոր,
Սուրբ Օհանէս բռնիր քեզի կնքաւոր,
Կնունքն, աւազան մեզ նշան մնաց:
Ինչ տուաւ իմ տէրը, ձէնն էլ լսաւ,
Փիրէն քեամալ էլաւ, մուրազին հասաւ,
Երանի էն աչքին, Քրիստոս տեսաւ,
Քաշած է պատկերքն անուան մնաց:
Մեռնիմ հայրապետների սուրբ կարգին,
Մելքիսեթ քահանայի օրհնած նշխարքին,
Սկոյ մէջ դրած վեր Պատարագին,
Միսն, արիւն մեզի դին իման մնաց:
Խոյլի Ֆեաքիւլ, մի դատիր աշխարհիս մեղքը,
Նատ թագաւորի աչքը մնաց իւր թախտը,
Քրիստոս երեք մարդ թողեց դժոխքը,
Յուդէն էր, Կայէնը, Անակ հա գնդան մնաց:

Սորանից յետոյ փոքր ընդմիջումն, կենացների առաջարկութիւն, պրախօսութիւն, զուարճաբանութիւն, որից յետոյ աշուղներից մինը

նկատեց թէ ինչի՞ միայն հանգուցեալ հեղինակների երգերն երգեն։ Չէ՞ որ կան և կենդանի բանաստեղծներ, որոնց երգերը նոյնչափ լաւ են, որչափ հանգուցեալ Քեաքիւլի երգերը։ Ապա ցոյց տուեց խմբի մէջ մի ազատակցու վերայ, որ էր Աբրահամ Ֆռանգուլեան, իւր երգերի մէջ «Ֆռանգ օղլի» մականունով։ Ամենի ուշադրութիւնը դարձաւ Աբրահամի վերայ և աշուղներին խնդրեցին երգել։

«Գիւզալլամայ»։

Ճանապարհով էկար տիւ հազար բարի,
կուրծքդ նարինջ թազայ նուբարի,
կանչեմ մտիկ չէս տայ, քո սիրտդ քար ի·
մէշքդ բարակ տիւ աննման նազանի։
Ոտքերդ հաքիր իս սաղրի սօլերը·
ինչպէս բաղի մէջը բացուի գիւլերը,
քիւլլու աստուորի (աշխարհ) չեմ տայ խալերը,
մէշքը բարակ տիւ աննման նազանի։
Փառքն հարկաւոր է Աստու դիվանին,
էն սրիւն գիլֆերդ թո՛ տանի քամին,
տիւ մէ պայծառ կրակ՝ ընկեար իմ ջանին,
մէշքը բարակ տիւ աննման նազանի։
Ֆռանգ օղլին ի՞նչպէս սէրիդ դիմանայ,
տիւ իմ սիրտս հաւատս իմանայ,
տիւ ես դարդի դարման, ոչ թէ Լոդման ա,
մէշքը բարակ տիւ աննման նազանի։

Աշուղները շունչ առան, իսկ լսողները բացականչեցին «կեցցէ, կեցցէ Աբրահամը, կեցցէ Ֆռանգ օղլին»։ Թէպէտ շարունակեցին երգել նոյն հեղինակի մի քանի երգերը, բայց նորա բանաստեղծական ուղղութիւնը ցոյց տալու համար բաւական է և վերոգրեալ մի երգը։ Աշուղներից յետոյ սկսուեց պարերգը։ Լայնատարած կանաչ դաշտի վերայ տղամարդիկ և կանայք, միմեանց ձեռք բռնած, բոլորակ լայն շրջան կազմեցին։ Կարմիր թաշկինակը մի ձեռքում օղի

մէջ ծածանելով, խմբապետը անցաւ պարաշղթայի գլուխը։ Նորա երկայն հասակը, գլխի, ոտերի և ձեռքերի շարժումը, ճարպիկութիւնը, բարձր և ներդաշնակ երգեցողութիւնը տալիս էին նորան հեղինակութիւն պարագլուխ լինելու։

Ահա նա շարժեց ոտերը, ծածանեց թաշկինակը, սկսեց ֆէոնդի եղանակով երգը և տարաւ իւր յետևից ամբողջ շղթան ծանր և համաչափ քայլերով։

«Բաղըմը գիւլ, բաղըմը գիւլ, բաղըմը·
«բաղըմը գիւլ, բաղըմը գիւլ, բաղըմը,
«ման հանդամ ալըմ եարն զօլբաղընը (ապարանջան)·

Սոյն տողերը նոյն ձայնով և եղանակով, պարագլխից յետոյ, կրկնեցին շղթայի տղամարդիկ։ Ապա պարագլուխը շարունակեց·

«Դու ման կդաս վերի վերի, բաղըմը,
«կրակն ընկնի քո սիրտ երի՝ բաղըմը,
«քո մօրն ասա՛ մինն էլ բերի բաղըմը,,
«ման հանդամ ալըմ եարն զօլբաղընը։

Այս տան վերջին խօսքերը դեռ չաւարտած՝ պարողներն իսկոյն խլեցին պարագլխից և երգեցին «բաղըմը գիւլ և այլն։ Այսպէս կրկնում էին նոքա պարագլխի ասած իւրաքանչիւր տանից յետոյ։

«Կալերներին կլի հաշան՝ բաղըմը,
«սիրտս փորումս փարիշան, բաղըմը,
«եալդուզ ոսկին զրկեմ նշան՝ բաղըմը,
«ման հանդամ ալըմ եարն զօլբաղընի։
«Մարգերումը վարենք հինայ, բաղըմը,
«իմ բոյը քո բոյը մին ա՝ բաղըմը,
«մարդ ուղարկենք վանքը շինայ՝ բաղըմը,
«ման հանդան և այլն։

Ամենայն լրջութեամբ շարունակելով սոյն երգը, յանկարծ պարագլուխը յորդոր եղանակով սկսեց «Փորոգէ»երգը։ Մանակցող կանայք կէս ամօթով, կէս ծիծաղելով դուրս փախան պարաշղթայից, թողնելով ասպարէզը միայն տղամարդոց։ Վերջինները և պարում էին և ծիծաղում և երգում հետևեալը։

«Փորոզէն տարան կալերով,
«Եար Եաման, խորոտ Փորոզէ,
«Փորոզէի ձիանք նալերով,
«Եար Եաման, խորոտ Փորոզէ,
«Փորոզի պագն է խամերով (Համեղ)
«Եար Եաման և այլն.
«Փորոզէն նստէ նախշ կանէ
«Խաւէրն կիկեան քէշ կանէ.
«սև կապած մերիկ վրշ կանէ և այլն:

Սոյն երգերից յետոյ վերջացաւ պարահանդէսը: Ժողովուրդը սփռուեց ամբողջ դաշտի վերայ և դանդաղաքայլ վերադառնում էին գիւղ:

Քանիցս անգամ հիւրասիրուած եմ ես այդ պատուական գիւղում, պատուական ժողովրդի մէջ, քանի՞ երկար երեկոներ ժողովրդով շրջապատուած նստել եմ ծխատէր Սիմէօն քահանայ Կոստանեանի կամ գիւղական տանուտէրի տանը. քանիցս անգամ լսած եմ այդ հաւաքուածների շրթունքներից զանազան ազգային սովորութիւններ, երգեր, նախապաշարմունքներ, հանելուկներ, հեքեաթներ և այլն և այլ, որոնք մի օր միւս տեղերի հայ ժողովրդական սովորութիւնների հետ դուցէ դուրս գան տպագրութեամբ:

Քանիցս անգամ ինքս ակամայ մասնակցել եմ նորանց նախապաշարմանց, որպէս զի առաւել մօտ ծանօթանայի նորանց ներքին կեանքի հետ:

—Գիտէք, պարոններ, ասաց միանգամ հանդիսականներից մինը, երբ նստած էինք տանուտէրի հիւրասենեակում, այս երեկոյ Համբարձման երեկոն է, եկէք չքնենք՝ որ տեսնենք թէ գիշերս ի՞նչպէս Լէյլին ու Մաջլումը իրար կդիպչեն:

—Լաւ, չքնենք, կրկնեցին բոլորեքեան, քանի՞ անգամ իւրաքանչիւրը մեզանից կամեցել է այդ գիշերը չքնել, բայց չէ պատահել: Եկէք խօսք կապենք ամենքս էլ չքնել: Ես և նորանց հետ պայմանաւորուեցինք չքնել, որպէս զի տեսնենք Լէյլիի և Մաջլումի իրար դիպչելը:

Ինձ, որ ամենից յետամնաց էի այդ բանում, բացատրեցին որ Լէյլին՝ լուսաբեր աստղն է, իսկ Մաջլումը՝ գիշերավար աստղը: Այդ երկու աստղերը իւրաքանչիւր տարի Համբարձման երեկոյին իրար դիպչում են թէ չէ, իսկոյն՝ վայրկենաբար՝ լոյս են արձակում, որով լուսաւորում են սարեր, ձորեր, ժայռեր, գետեր, անտառներ, դաշտեր և այլ առարկաներ, որոնք, աստղերին հետևելով, նոյնպէս դիպչում են իրար: Որովհետև Լէյլիի և Մաջլումի իրար դիպչելը լինում է վայրկենական կերպով և հետևաբար դժուար նշմարելի, ուստի նորանց դիպչելու րոպէին տեսնողը մի որ և առարկայի ասի «ոսկի կամ արծաթ դարձիր», առարկան իսկոյն ոսկի կամ արծաթ կդառնայ:

Ահա մի խումբ երիտասարդ տղայք, աղջկունք և հարսներ գնացին դաշտ ՝ի-ջ՝ան՝ց կ՝ան՝ը ղ՝ֆ՝ելո՝-: Իւրաքանչիւրը նոցանից ընտրեց մի ծաղիկ, սպիտակ ծաղիկ, որի ցողունը գետնի երեսից մի թիկ բարձրութեան վերայ թելով կապեց: Առաւօտն իւրաքանչիւրը գտնելով իւր ընտրած ծաղիկը, կվերաստուգէ թէ չափած և կապած ծաղկացողունը մի թզից աւելացել է թէ պակասել և դորանից կորոշուի թէ կապողի կեանքը կերկարի թէ կը կարճանայ:

Հասաւ գիշերը, վճիտ երկինքը իւր փայլուն աստղերով նայում է մեզ վերայ և զարմանում է մեր խելքի վերայ: Իսկ մենք խմբուած մի տան տանիքի վերայ, գնում ենք աստղերը:

Նոցանից որն է Լէյլին և որն Մաջլումը՝ մինչև այժմ չգիտեմ:

Գիւղի կանայք նոյնպէս անքուն հսկումէին՝ ոմանք Լէյլիի և Մաջլումի դիպչելուց ոսկի ստանալու, բայց առաւել մեծ մասը՝ իւրեանց բարիքը պահպանելու, ըստորում լուր տարածուեց որ այդ երեկոյին լէյլն է պտտուելու գիւղի մէջ: Գիւղի կանանց համար մի կորստաբեր չարիք է այդ լէյլին, որ նոյն գիւղի կանանցից է: Եթէ մի կին ցանկանում է որ այդ տարին իւր կովերը առատ կաթ տան, իւր իւղը, պանիրը առատ լինեն, նա այդ գիշերը դառնում է լէյլի և լէյ է անում ուրիշների կովը, իւղը պանիրը և այլն: Դորա համար լէյլի կինը մերկանում է, կապում է կաշիէ գոգնոցը, որը ձեռքով շփելով, մեծ զգուշութեամբ դալտագողի պտտւում է սորա և նորա բակերը, արտասանում է մի աղօթք և ամեն մի բակից, տնից

աշխատում է վերցնել փայտ, քար, կամ այլ իրեղէն, որով և թը-շուառացնում է այդ տները, լէբ անելով, այն է պակասեցնելով այդ տարի նրանց կաթը, պանիրը, իւղը և այլն:

Նուշան, շուտ արա՛, լէբչուն կապիր, որ մեր տնից չկարողանայ բան տանել, պատուիրեց իւր ամուսնուն մօտս եղողներից մինը:

Նուշանը հարկաւոր միջոցները իսկոյն գործադրեց, լէբչուն կապեց: Տան շեմում, դռան տակ նա երկու բևեռ ցցեց գետնի մէջ, գլուխները կապեց մապէ թելով և տակը կորեկ ցանեց. ապա վագեց տան երդիկը և երդկի շուրջը բոլորակ գիծ քաշեց: Այս կարևոր և անհրաժեշտ միջոցները գործ դնելուց յետոյ սկսեցին իսիստ հսկողութիւն կարգել որ, եթէ կ՚յաջողի, լէբչուն բռնեն և պատժեն:

Իսկ մենք, Լէյլին և Մաջլումին գնողներս, հաւաքեցինք մեր շուրջը մեծ մեծ քարեր, փայտի կոճղներ, ձիու թամբ, եզան չուլ, կացին, խոփ և այլ առարկաներ և գործիքներ և, ապուշ դարձած, անդադար նայում էինք դէպի երկինքը: Նայում էինք որպէս զի ձեռքից չթողնենք աստղերի ընդհարումն և ոսկի դարձնենք մեր շուրջը ժողոված քարերը, փայտերը և այլ իրեղէնները . . . :

Անընդհատ նայելուց մեր աչքերը շաղուեցին, երկնքի աստղերը խառնուեցին իրար և թէպէտ դժուար էր որոշել թէ ո՞ւր է Լէյլին և ուր Մաջլումը, բայց աստղագէտ շրջապատողներս անդադար կրկնում էին միմիանց թէ ահա Լէյլին երևում է, ահա Մաջլումը մօտենում է, ահա քիչ է մնացել դարկուեն, ահա լոյսը փայլեց, մի խօսքով այնպիսի երևոյթներ, որ միայն երևակայութեան մէջ կարելի էր տեսնել:

Երբ գիշերը եղել էր կէս, երբ ամբողջ երկնային կամարն ամփոփել էինք մեր երկու փոքրիկ աչքերի մէջ, երբ ուշադրութեամբ վերացած՝ շլացել էինք Լէյլիի և Մաջլումի լոյսից, երբ մտքով երկինքն էինք բարձրացել, իսկ ձեռքերով ամուր բռնել քարերը որ ասէինք ոսկի դարձէք, այդ զարհուրելի և մտատանջ բոպէին յանկարծ լսուեց Նուշանի ապիրողորմ ձայնը «լէբչին եկաւ, լէբչին եկաւ»:

Մի ակնթարթում ընկերներս մոռացան և Մաջլումին և Լէյլիին և ով ինչ կարողացաւ՝ բռնեց ոսկիացու իրեղէններից և վազեց դէ-

պի լէբչին: Մուրթը գիշեր, շների հաջոց, մարդկանց ազմուկ, կանանց ճիչ խառնուեցին իրար և զարկ էր որ իջնում էր խեղճ լէբչու գլխին: Այնքան զրահաւորուել էին թշուառ լէբչու դէմ, որ չէին նայում անգամ թէ ում կինն է, ձեր է, երիտասարդ է և այլն: Եւ ի՞նչպէս կարելի էր չզրահաւորուել՝ երբ անգութ լէբչին եկել էր որ խեղճ մարդկանց կաթը, իւղը, պանիրը և այլ բաները լէր անէ, սակաւցնէ և իւրեանը շատացնէ:

—Տեսէք, տեսէք, քուրք է գալել վրան, ոչխարի գտակ է ծածկել գլխին, մազերն էլ խուզել է որ չճանաչեն, ասում և զարկում էին լէբչի կնոջը: Իսկ խեղճ կինը միայն հառաչանքի ձայն է հանում հարուածների տակ:

—Ձեռքին գաւազան ունի, տեսնես ում գոնիցն է վերցրել և այն տունը լէր արել, ասում էին միւսները:

Հետաքրքրութիւնից շարժուած Նուշանը ճրագ բերեց, լոյս տուվեց, և ամենքն էլ տեսան որ ի՞նչ, ոչ լէբչի, ոչ այս և ո՛չ այն, այլ զրացու հովիւ ծերունի քիւրդ Հասօն է, որ գիշերը հիւանդութիւնից ստիպուած, մուշտակն ուսին, գաւազանի օգնութեամբ դուրս էր եկել Նուշանենց բակի սահմանը . . . .

Ի՞նչ օգուտ, թէ և ճանաչելիս, զղջացին, ոմանք ծիծաղեցին, ոմանք ցաւակցեցին, ոմանք էլ նախատեցին նորա անզգոյշ դուրս գալու համար, բայց՝ բանը բանից անցել էր . . . Թշուառական Հասօն իւր միամտութեամբ միանգամից լուծեց երևակայական լէբչու և երկու աստղերի ընդհարման հարցերը:—

Թողնելով Ագատէկ գիւղը, մենք դիմենք դէպի Փոռ գիւղը, որ գրած է 5—6 վերստ հեռու արևելեան կողմում: Դիրքը լաւ, շրջակայքը գեղեցկավայել, ջուրը մաքուր, 50 տուն բնակիչներով, 220 արական և 190 իգական, ամբողջովին գաղթած են Պարսկաստանից՝ Սալմաստի Սաւրի գիւղից, որ նշանաւոր է իւր վաղեմի պատմական իրաչագործութեամբ: Փոռեցիք ժառանգաբար շարունակել են և յաջողութեամբ շարունակում են իւրեանց նախնեաց, Սաւրի գիւղացւոց, վատ սովորութիւնը, և հարպիկութեամբ, տոկունութեամբ և հմտութեամբ մեծ և փոքր պարապում են իւրեանց տգեղ արհեստով—իրաչագործութեամբ Ռուսաստանի զա-

նազան անկիւններում:

Յաճախ է պատահում որ տղամարդկերանց երկար բացակայութեամբ՝ գիւղի հասարակական պէտքը լրացնում են կանայք, որոնք մինչև անգամ հերթական գիշերապահ են լինում գիւղի մէջ:

Թաչագողութեան վատթար ճանապարհով Փոռեցիք ձեռք են բերել բաւականաչափ հարստութիւն: Մի գուցէ այդ սովորութեան և հարստութեան հետևանքն է, որ Փոռում սովորական երևոյթներ են կռիւներ, խռովութիւններ, գրկանքներ, գողութիւններ, մարդասպանութիւններ, ապօրինի կանայք պահել, դատաստաններում շարունակ թափառել և այլն:

Եթէ Օրբելեան պատմագրի ցուցակի մէջ յիշուած Բոր գիւղն այժմեան Փոռն է, և եթէ Բոր նշանակում է բոր, բորոտութիւն, քոսոտութիւն, այն ժամանակ հասկանալի կլինի թէ Սաւրի գիւղացիք որպէսի յաջող ընտրութիւն են արել գիւղատեղի վերաբերութեամբ:

Փոռը մինչև անգամ հնութեան կոչումից կատարեալ զուրկ է: Միայն երկու քար գիւղի գերեզմանատնում դրած կարող են հնութեան նշոյլ ունենալ, նոքա ևս բերուած են Փոռ այլ գիւղերից: Մինը բերուած է Կայալուի դէմի սարից «Թվ. ՉԻԲ.» (722) փորագրութեամբ, միւսը՝ Սէյլանից «Ես Սարգիս բարեխաւս հաւր, Թվ. ՉԾՉ (756):

Փոռեցիք բաւականաչափ նահատակուած են և դպրոցական գործի ասպարիզի վերայ: Սորա հետաքրքիր պատմութիւնը կարելի է գտնել «Արձագանգ» շաբաթաթերթի մէջ *): Թողնենք այս գիւղը և գնանք Փաշալու:

(Շարունակելի) ՔԱՋԲԵՐՈՒՆԻ.

---

*) Քաջբերունի, Դպրոցակ. գործը Շարուր — Դար. դաւառում, «Արձագանգ» 1887 թ.

ԱԶԳԱՅԻՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

Յաղագս վերանորոգութեան Մայր Աթոռոյ Ս. Յակոբայ Երուսաղեմի.

Բարեպաշտն Խաչատուրն Կիրիեանց ի Բագու քաղաքէ ի 1883 ամէ հետէ վճարէ յօգուտ ճեմարանի Մայր Աթոռոյ զտասնական ռուբլիս և հոստանայ այսուհետև ևս անընդհատ վճարել։

ողջուրդք Թալին գեղջ.

	Ր.	Կ.
Տիատէր Եղնիկ քահանայ Դիլանեանց	3	
Բարսեղ Տէր Թադէոսեանց	1	
Թորոս Գէորգեան	1	
Խաչատուր քահանայ Տէր Թադէոսեան	1	
Ալեքսան Մանուկեան		50
Ենգոյ Փոթէեան		50
Կիրակոս Աբրահամեան		50
Աւետիս Պետրոսեան		25
Աստուածատուր Ապտալեան		50

Գեօղլու գեղջ.

	Ր.	Կ.
Մանուկ Պետրոսեան		50
Մանուկ մահտեսի Հայրապետեան	1	
Յունան Աբրահամեան	1	
Մուրադ Օհանեան		50
Եղիազար Գէորգեան		50

Ղրմզլու գեղջ.

	Ր.	Կ.
Մարտիրոս Սիմոնեան	1	
Նահապետ Գաբրիէլեան		50
Մնոյ Գէորգեան	1	
Խանում Վարդանեան		80
Գրիգոր Յարութիւնեան		20
Զաքար Կարապետեան		20
Սահակ Գալուստեան		20
Վերին Ղարաքիլիսեցի Ռափայէլ Նազարէթեան	1	
Շիրվանջեցի Մարտիրոս Օհանեան	1	
Թալինցի Աւետիս Գէորգեան Աղեկեանց	1	
Թալինցի Արշակ Նազարէթեան	1	
Նալբանդ Գէորգ Աղաստապեան	1	
Թալինցի Մկրտիչ Աւետիսեան	1	
Թալինցի Մանուկ Կարապետեան		20

Թալինցի Պօղոս Բարսեղեան		50
Վաղարշ վարժապետեանց		50

Ադիամանի գեղջ.

Պապան Էրամեան	1	
Խաչատուր քահ. Մանուկեան		50
Մնոյ Պօղոսեան		60
Գաբրիէլ Աւետիսեան		60
Այվազ Սիմոնեան		50
Խաչատուր մահտ. Մասկեան		

Տաշղալայ գեղջ.

Վարդիկ Գալոյեան		60
Փիլիպպոս Սարգիսեան	1	

Մատատարայ գեղջ.

Սիրեկան Տէր Մարգարեան	1	
Դանիէլ Դաւիթ Բողոյ	1	
Նոյեմ Սիրեկանեան	1	
Յարութիւն Էջօեանց	3	
Աղեքսան Մխիթարեան	1	
Հովնաթան Մարգարեան	3	
Մուշեղ Գրիգորեան	1	

Թալին գեղջ.

Մարտիրոս Մանուկեան		50
Սարգիս Աբրահամեան		25
Կիրակոս Մկրտիչեան		25
Սահակ Կարապետեան		50
Խաչատուր Մարտիրոսեան		25
Կնեազ Յովհաննէսեան		25
Եղիազար Ղարիբեան		50
Իսրայէլ Տէր Յարութիւնեան		50
Յարութիւն Գալոյեան		50
Սահակ Յակոբեան		25
Բարէ Բաղդասարեան		25
Պետրոս Բարիեան		25
Սարգիս Տէր Գէորգեան		25
Գէորգ Մոլոէսեան	1	
Հասարակութիւն Մատատարայ գեղջ	15	20
Հասարակ. Տաշղալայ գեղջ	28	40
Հասարակ. Ադիամանի գեղջ	6	60
Հասարակ. Մազարջուղ գեղջ	16	
Հասարակ. Ղրմզլու գեղջ	26	
Հասարակ. Գեօղլու գեղջ	22	
Հասարակ. Դաղալու գեղջ	20	
Հասարակ. Թալին գեղջ	30	60

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՎԱՆ

Փոռ	8	
Կորագիլ	23	70
Դամիրզնդան	11	15
Նորսայ գործակալի ձեռամբ	33	
Փաշալու	5	
Մարտիրոս	13	
Սերս	13	
Սուլթան բեգ	14	
Թումբուլ	11	25
Ազատակ	8	
Հերհեր	4	
Ղուշչի բիլակ	4	
Ջնաբերդ	19	
Ապրակունիս	29	15
Փորադաշտ	9	
Արազին	4	
Գեաղ	4	
Գումրի	17	
Ղուլիբեգ գիվայ	6	50
Նախիջևան	25	25
Ջահուկ	19	30
Մալիշկայ	10	
Ենգիջայ	5	
Խաչիկ	14	
Վերին Ագուլիս	33	50
Օրդուբատ	2	20
Դիր	8	
Վերին Ակայ	6	
Ղարախան բեկլու	10	
Գումար	370	—

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 29 Նոյեմբերի ընդ Համարաւ 507 յանուն Առաջնորդին Հայոց Շամախւոյ, որով Հաստատէ ի պաշտօն Հոգաբարձութեան եկեղ.—Ծխական Միդասեան տղայոց կեդրոնական ուսումնարանի Ղալակա գեղջ գրաբեկրօն Սարգիս քահանայն տէր Սահակեանց, զերիցփոխան Հայրապետն Եաբուլեանց և զԲզովանդցի երիցփոխան Աղեքսանդրն Միրզայեանց. իսկ անձնափոխանորդ վերջնոյս զպատուելի Հայրապետն Մելիքսեդեկեանց:

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 21 դեկտեմ. ընդ Համարաւ 526 յանուն Առաջնորդին Արցախոյ, որով Հաստատէ ի պաշտօն Հոգաբարձութեան եկեղ.—Ծխական Միդասեան ուսումնարանի Թաղլար գեղջ գրաբեկ. Մեսրովբ քահանայն Բաբայեանց, զերիցփոխան եկեղեցւոյ տեղւոյն և գյարգելի Մեխակն Ջաբեանց. իսկ անձնափոխանորդ վերջնոյս զպատուելի Փաթալին Սանամեանց:

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի նոյն թիւ ի նոյն համար յանուն նորին, որով Հաստատէ ի պաշտօն Հոգաբարձութեան եկեղ.—Ծխական Միդասեան ուսումնարանի Աշան գեղջ գրաբեկ. Բաղդասար քահանայն Տէր Աւագեանց զերիցփոխան եկեղեցւոյ տեղւոյն և գյարգելի Սիմէոնն Բալայեանց. իսկ անձնափոխանորդ վերջնոյս զպատուելի Յարութիւնն Մահտեսի Մուսայէլեանց:

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 21 ամսոյս ընդ Համարաւ 528, յանուն նորին, որով ընդարձակէ նմա գիրաւունս բանալոյ զեկեղ.—Ծխական Միդասեան ուսումնարան տղայոց Ննդի գեղջ Շուշւոյ գաւառի և ի պաշտօն Հոգաբարձութեան այնորիկ Հաստատէ զբաբեկ. Գրիգոր քահանայն Տէր Պողոսեանց, զերիցփոխան եկեղեցւոյ տեղւոյն և գյարգելի Գրիգորն Պողոսեան. իսկ անձնափոխանորդ վերջնոյս՝ զպատուելի Յարութիւնն Մուսակելեանց:

—

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՄԱԿԱՐ ՏԷՐ—ՍԱՐԳՍԵԱՆԻ

Հետևեալ աշխատութիւնները Կ.

1. *Հայկական գեղագրութեան օրինակներ։*
   Երրորդ բարեփոխած տպագրութիւն։ գինն է . . . 35
2. *Օժանդակ կրթութիւններ Հայկական գեղագրութեան օրինակների* 3
3. *Գեղագրութեան տետրակներ* 5
   Գումարով գնողները զիջումն են ստանում
   100—500 *օրինակին* 10%
   550—1000 . . . . . 15%
   1200 *և աւելի* 25%
   Ճանապարհածախքը գնողների վրայ է։
   Դիմել Երևան հետևեալ հասցէներով։—
   Учителю Макару Теръ Саркисянцъ
   Կամ՝ Эмину Теръ—Григорьянцъ

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ են և առաջիկայ 1891 *թ. լոյս կը տեսնին իմ թարգմանած հետևեալ* 5 *գրքերը։*

1. «Փարոանի աղջիկը», *պատմական վէպ* Գ. Էբերսի (*պատկերազարդ։*)
2. «Իշխանն ու աղտոտը», *պատմական վէպ* Մարկովենի (*պատկերազարդ*)
3. «Անգերկիր է քի-ոը» *հետ.* Լեսմ—Ֆլեորի (*պատկերազարդ*) 4. Անդերսենի «Ի՞նչ էր պատահում լուսինը» (25 *մանկական վէպիկ*)։ 5. «Օքերլենի կենդանի-գորգերը»։

Թիֆլիսում բաժանորդագրութիւնն ընդունվում է «Կենդրոնական» գրավաճառանոցում՝ և թարգմանչի մօտ Ներսիսեան դպրոցում։ Բաժանորդագինն է 3 *ռուբլի։ Տպագրութիւնից յետոյ* 4 *ռուբլի։*

Ընթերցող Հայ—հասարակութեան ձեռնտուութեամբ վերջին 10 *տարուան ընթացքում հրատարակուել են և ուղարկուել բաժանորդներին թարգմանչի աշխատութիւններից՝* 1) Մարոր, Ֆիզիկական և բարոյական Ինքնակրթութիւն» *պրոֆեսոր* Ջոն Սարբ-ուրդ Բլեքիի-ի։ 2) Մայրական դաստիարակութիւն» Ֆ. Բոնֆոնդի։ 3) Ինչ կարծ ու դաստիարակութիւնը» Լուիզ Բի-ինների։ 4) Ընտրութիւն կրթութիւնը» *պրոֆեսոր* Ա. Պաշրելեի *և այլն։*

Հասցէն՝ Тифлисъ. Учителю Армянской Семинаріи, Григорію Шахбудагянцу

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆՑ

ՊԱԾՏՕՆԱԿԱՆ ՅԱՋՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ ՄՆԱՑՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ
Ց. ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻՆ

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց, գործադիր Մնայուն Յանձնաժողովս պատիւ ունի հրաւիրել այն հեղինակներն ու բանաստեղծներն՝ որք ազգային գրականութեան և պատմութեան վերաբերեալ որ և է աշխատութեամբ մը կը փափաքին մասնակցել Սահակ - Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատութիւններն յուղարկել մինչև յառաջիկայ 1891 տարւոյ Յունուարի վերջ առ Ս. մենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրն, Յանձնաժողովոյս հասցէին:

Տպագրեալ աշխատութիւնք պէտք է երեք օրինակ ուղարկուին, իսկ ձեռագիրք բնաւ յետ չեն դարձուիր:

Օրացոյց 1891 ամի, գինն է 20 կոպ. ցանկացողները թող դիմեն Ս. Իճակային Կոնսիստորիաներին, Հոգ. Կառավարութեանց. ի Տփխիս Կենդ. դրավաճառանոցին, Յերևան Պ. Կարապետ Դատամեանցին և Տպար. Ժողովին ի Ս. Էջմիածին: